# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԷ. ՏԱՐԻ ԹԻՒ 38 (1338) ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 27, 2007
VOLUME 27, NO. 38 (1338) SATURDAY, OCTOBER 27, 2007

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՄԻՋԱՄՏՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀԻՒ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒԵՑԱՆ

*Երեքշաբթի, Հոկտեմբեր 23-ին Երեւանի կենտրոնը քաշքշուք տեղի ունեցաւ «Այլընտրանք» ընդդիմադիր նախաձեռնութեան անդամներու եւ ոստիկաններու միջեւ, որմէ ետք «Հայկական ժամանակ» եւ «Չորրորդ Իշխանութիւն» թերթերու գլխաւոր խմբագիրներ Նիկոլ Փաշինեանը եւ Շողեր Մաթեւոսեանը, ինչպէս նաեւ Դաւիթ Մաթեւոսեանը, «Ժողովրդավարական Հայրենիք» եւ Պահպանողական կուսակցութիւններու առաջնորդներ Պետրոս Մակէեանը եւ Միքայէլ Հայրապետեան բիրտ միջոցներով տարուեցան Կենտրոն համայնքի ոստիկանութեան բաժին:*

*Դէպքը պատահեցաւ այն ժամանակ երբ, ընդդիմադիր գործիչները բարձրախօսով կոչ կ՚ընէին քաղաքացիներուն մասնակցելու Հոկտեմբեր 26-ին Ազատութեան հրապարակին վրայ կայանալիք հանրահաւաքին, որու ընթացքին նախատեսուած է Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան ելոյթը:*

*Նոյն պահուն, Հնչակեան «Սարգիս Տխրունի» Երիտասարդական Միութեան երեք*

*Շար.ը էջ 4*

## ՎԱՐՉԱՊԵՏ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԱՅՑԵԼԱԾ Է ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

*Կը տեղեկանանք որ, Հայաստանի վարչապետ Սերժ Սարգսեան Միացեալ Նահանգներ կատարած իր այցելութեան ընթացին, երկու օրով գտնուած է Լոս Անճելըս:*

*Ուրբաթ, Հոկտեմբեր 19-ի երեկոյեան «Պէվըրլի Ուիլշըր» հիւրանոցէն ներս, կազմակերպութեամբ Հարաւային Քալիֆորնիոյ Համալսարանի (USC) Հայկական Ուսումնասիրութեան Կեդրոնի տեղի ունեցած է վարչապետի հետ հանդիպում, որուն ներկայ եղած են հայկական կազմակերպութիւններու եւ մամուլի ներկայացուցիչներ եւ անհատ ազգայիններ:*

*Սերժ Սարգսեան հանդիպում ունեցած է նաեւ «Լոս Անճելըս Թայմզ» թերթի խմբագրական կազմի անդամներուն հետ: Հարցազրոյցը լոյս տեսաւ թերթի էլեկտրոնային տարբերակին մէջ:*

## ԻՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՆԱԿՆԿԱԼՕՐԷՆ ԿՐՃԱՏԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆ ԻՐ ԱՅՑԸ

*Իրանի Իսլամական Հանրապետութեան Նախագահ Մահմուտ Ահմատինեժատ կրճատելով Հայաստան կատարած իր երկօրեայ այցը, Հոկտեմբեր 23-ի առաւօտեան անակնկալօրէն վերադարձած է Թեհրան:*

*Պաշտօնական այցելութեան երկրորդ օրը նախատեսուած էր Իրանի նախագահի այցը Ծիծեռնակաբերդ, ուր տեղի պիտի ունենար ծառ տնկման արարողութիւն, Ցեղասպանութեան Թանգարան - ինստիտուտին յարող տարածքին, պիտի այցելէր Կապոյտ մզկիթ եւ ապա ելոյթ պիտի ունենար Ազգային Ժողովի պատգամաւորներուն առաջ: Այս բոլորը ջնջուած են:*

*Յայտագիրի այս փոփոխութեան համար միջազգային մամուլը կու տայ երկու բացատրութիւն: Առաջինը այն է թէ, Իրանի նախագահը իր երկրէն ներս կ՚ենթարկուի բուռն քննադատութեան, կապուած ատոմակայանի կառուցման շուրջ արեւմուտքի հետ իրանի բանագնաց Ալի Լարճանիի հրաժարականին: Երկրորդ բացատրութիւնը այն է թէ, Ահմատինեժատ խուսափած է Ցեղասպանութեան յուշարձանը այցելելէ, չվշտացնելու համար Թուրքիան:*



Նախագահ Ահմատինեժատ Երեւան ժամանման պահուն

*Շար.ը էջ 4*

## 25 ՆՈՐԱԳԻՐՆԵՐ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵՑԻՆ ՀՆՉԱԿԵԱՆ ՇԱՐՔԵՐԷՆ ՆԵՐՍ

*Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան 120-ամեակի միջոցառումներու ծիրէն ներս Շաբաթ, Հոկտեմբեր 21-ի երեկոյեան Կուսակցութեան Փասատինայի կեդրոնէն ներս տեղի ունեցաւ երդման յատուկ արարողութիւն, որու ընթացքին 25 երիտասարդ-երիտասարդուհիներ ուխտելով ծառայել Ազգին ու Հայրենիքին՝ մուտք գործեցին Հնչակեան կուսակցութեան շարքերէն ներս:*

*Արարողութեան ներկայ էին Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան ատենապետ Ընկ. Սեդրակ Աճէմեան եւ քարտուղար Ընկ. Գրիգոր Խոտանեան, Լուիզիանա Նահանգէն Կուսակցութեան մասնաճիւղի ատենապետ Ընկ. Վազգէն Գալթագճեան, ինչպէս նաեւ Արեւմտեան*

*Շար.ը էջ 4*

## «ԳՈՀԱՐ» ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲԻ, ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐԵՐՈՒ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՄՈՅԹԸ ՆՇԱՆԱԿԵՑ ՆՈՐ ՉԱՓԱՆԻՇ




*ՏՕՔԹ Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ*

*Միշտ չէ որ, բեմահարթակներու, պաստառներու վրայ, կամ կրկէսներու մէջ անհատական, խմբային կամ այլ եւ լայլ բնոյթի մակարդակի հրամցուած ներկայացումներ իրենց ստեղծագործական, գեղարուեստական եւ կատարողական գրաւչութեամբ այլապէս կատարելութեամբ կ՚արդարացնեն ամիսներ ամբողջ շուկայական հրա-*

*Շար.ը էջ 18*

## Ս.Դ.Հ.Կ.-ՌԱԿ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հոկտեմբեր 14-ին Լոս Անճելըսի մէջ տեղի ունեցաւ հանդիպում՝ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական վարչութիւններու միջեւ:

Առաջին հերթին կողմերը ողջունեցին Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովէն ներս թիւ 106 բանաձեւի ընդունումը եւ ապա քննարկեցին Հայկական Ցեղասպանութեան Ճանաչման գծով հետագայ աշխատանքները հունաւորելու եւ պահանջատիրութեան հարցի շուրջ համազգային տեսակէտ բանաձեւելու գծով միասնաբար տարուելիք աշխատանքները:

Տեղի ունեցան կարծիքներու փոխանակում, սփիւռքի տարածքին երկու կուսակցութիւններուն միջեւ առաւել սերտ համագործակցութիւն ստեղծելու կարելիութիւններու մասին:

Կուսակցութեանց ներկայացուցիչները քննարկեցին նաեւ Հայաստանէն ներս տիրող քաղաքական իրավիճակը եւ յառաջիկայ նախագահական ընտրութիւններուն առնչուող հարցեր:

**ՌԱԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**
**Ս.Դ.Հ.Կ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**


ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
**120–ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ**
Կիրակի, **4** Նոյեմբեր, **2007,** երեկոյան ժամը **6:00** ին
**Glendale High School**–ի սրահին մէջ – **1440 East Broadway, Glendale, CA 91205**
Մուտքը Ազատ

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ՍԵՓԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ղարաբաղեան պատերազմի աւարտից անցել է 13 տարի, սակայն որեւէ հաւաստի, ստոյգ գրականութիւն՝ այդ պատերազմի պատմութիւնը, ժամանակագրութիւնը, դէպքերի զարգացումը, օպերացիաների կազմակերպումը նկարագրող վաւերագրութիւն գոյութիւն չունի: Իսկ մարդիկ, ովքեր անմիջական մասնակցութիւն են ունեցել յաղթանակը կռելու գործում, կամաց-կամաց պակասում են՝ օբիեկտիւ եւ սուբիեկտիւ պատճառներով, կամ էլ հետեւողականօրէն չէզոքացւում են:

Մնացողներն էլ գրում են իրենց պատմութիւնը:

Պատմութեան՝ իրենց հարազատ դրուագները:

Այդպէս, 2004 թուականին հրատարակուեց «Ղարաբաղեան ազատագրական պատերազմ. 1988-1994» պատմավաւերագրական հաւաքածուն, որը բոլոր հնարաւորութիւններն ունէր դառնալու Ղարաբաղեան ազատամարտի իւրօրինակ հանրագիտարան: Սակայն քանի որ դրա հեղինակը Զորի Բալաեանն էր, նոյնիսկ առանց մեկնաբանութեան փաստերը ներկայացուեցին խիստ սուբիեկտիւ: Այս գրքի ընթերցող յաջորդ սերունդը կարծիք է կազմելու Ղարաբաղեան յաղթանակի մասին Զորի Բալաեանի պրիզմայով:

Եթէ վստահենք Բալաեանական հանրագիտարանին, ամենամեծ դերը պատմական յաղթանակում վերապահուած է եղել հենց Բալաեան Զորիկին: Որովհետեւ միայն երկու էջ ներկայացնում է իր կենսագրութիւնը՝ ամենաերկար կենսագրութիւնն ամբողջ գրքում, այսինքն, ամենակարեւոր անձը՝ մեր յաղթանակում:

Լեւոն Տէր-Պետրոսեանի, Վազգէն Սարգսեանի, Մովսէս Գէորգիսեանի, Մոնթէի եւ միւսների մասին՝ ընդամէնը կէս էջ: Սերժ Սարգսեանի եւ Ռոբերդ Քոչարեանի՝ հայրենակիցների հանդէպ, Բալաեանը փոքր-ինչ շռայլ է գտնուել՝ 1,5 էջ ներկայացնելով նրանց կենսագրութիւնն ու գործը Ղարաբաղի համար ճակատագրական տարիներին:

Այսօր նոր գիրք՝ եռահատորյակ է պատրաստւում հրատարակութեան. 2008 թուականին Հայերի համաշխարհային Կոնգրեսը, որի նախագահն է Արա Աբրահամեանը, գիրք կը հրատարակի Ղարաբաղի հակամարտութեան մասին, «որպէսզի աշխարհի տարբեր երկրներում այն ներկայացուի ու վկայի Ղարաբաղի հայութեան պայքարի արդարացիութեան մասին»: Արա Աբրահամեանը Երեւանում յայտարարեց, որ իրենք օգտուել են տարբեր աղբիւրներից. «Աշխատել ենք մենք աւելի շատ ռուսական աղբիւրներում, աշխատել ենք Ատրպէյճանի աղբիւրներում: Չունենալով Ատրպէյճանի հետ կապ, մենք կարողացել ենք մեխանիզմներ ապահովել եւ Բաքուից ստացել ենք շատ նիւթեր, այլ ճանապարհներով»: Փետրուարին արդէն լոյս կը տեսնի երկու հատորը, մի 5-6 ամիս յետոյ՝ երրորդ հատորը, «որտեղ լինելու են բոլոր փաստերը, ամբողջ Ղարաբաղի պատմութիւնը: Իրաւաբանների եզրակացութեամբ, թէ Ղարաբաղը ոնց է, ինչ է եղել, որ ժամանակ ինչպիսի կարգավիճակում է եղել եւ այսօր ինչ կարգավիճակում է եւ ինչպիսի իրաւունքներ ունի»,- ասել է Արա Աբրահամեանը:

Թէ ինչ կապ ունի Արա Աբրահամեանը Ղարաբաղեան պատմութեան հետ, եւ ինչ գիտի ընդհանրապէս ազատամարտի պատմութիւնից, դժուար է ասել, բայց վստահօրէն կարելի է պնդել, որ այդ գրքում մուգ տառերով առանձնացուած կը լինեն Արա Աբրահամեանի եւ եղբայրների՝ Ղարաբաղին ուղղուած տարբեր կարգի բարեգործութիւնների մասին հրաշապատումը:

Ի դէպ, Արա Աբրահամեանը տեղեկացրել է, որ 2008 թուականի Փետրուար-Մարտ ամիսներին պատրաստում են Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորմանը նուիրուած միջազգային գիտաժողով: Արա Աբրահամեանը Հոկտեմբերի 14-ին եղել է Ղարաբաղում եւ հանդիպել է ԼՂՀ նախագահ Բակօ Սահակեանի հետ ու ձեռք բերել մի շարք ծրագրերի վերաբերեալ պայմանաւորուածութիւններ՝ գիւղական բնակավայրերի զարգացման, հիւանդանոցների ու դպրոցների բարելաւման, նիւթատեխնիկական բազայի թարմացման վերաբերեալ: Արա Աբրահամեանը նաեւ խոստացել է կառուցել զինծառայողների համար նախատեսուած միկրոշրջան, քանի որ Ղարաբաղում կայ բնակարանի կարիք ունեցող մօտ 2000 զինծառայող: Արա Աբրահամեանն ասել է, որ չնայած Ղարաբաղ ամէն անգամ այցելելիս նկատում է դրական տեղաշարժը, բայց նաեւ նկատել է, որ այն չի բաւարարում ժամանակակից պահանջներին:

Ինչպէս արդէն գլխի ընկաք, այն ամէնը, որ կը կառուցուի եւ կ'արուի Արա Աբրահամեանի ջանքերով եւ միջոցներով, տեղ կը գտնի Ղարաբաղի մասին գրքի երրորդ հատորում:

Ամփոփելով՝ նկատենք. Զորի Բալաեանը ոչ թէ արցախեան պատմութիւնն է սիրում, այլ իրեն՝ այդ պատմութեան մէջ:

Նոյնը Արա Աբրահամեանը. նրան հոգեհարազատ է ոչ թէ համաշխարհային հանրութեան կարծիքը Ղարաբաղեան խնդրի մասին, այլ այդ պատմութեան մէջ իր անձնական ներդրման ընդգծումը:

Իսկ պատմութիւնն իրականում կերտած մարդիկ շարունակում են մնալ լուսանցքում, պատմութեան լուսանցքում:

Դ. ՄԿՐՏՉԵԱՆ
«ՏԱՐԵԳԻՐ»

# ԻՐԱՐ ԼՍԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ

Այսօր մեր հասարակական կեանքը առողջացնելու միակ ճանապարհը երկխօսութիւնն է: Եթէ իշխանութիւնը կարծում է, որ կեղծելու է ընտրութիւնները եւ դրանից յետոյ 5 տարի ուրախ կեանք է վայելելու, դա, կարծում եմ, պատրանք է: Արագօրէն փոխուող ներքին եւ մանաւանդ արտաքին իրավիճակը դա պարզապէս թոյլ չի տայ: Եթէ ընդդիմութիւնը յոյսեր է փայփայում, թէ ընտրութիւններից յետոյ ժողովրդին փողոց կը հանի եւ յեղափոխութիւն կ'իրականացնի, դա էլ է մոլորութիւն: Զանգուածային ընդվզում չի լինի, իսկ ոչ զանգուածայինը կը կասեցուի մահակներով եւ ջրցան մեքենաներով:

Ելքը հանդիստ իրար լսելն է: Առանց նախապաշարումների, առանց պիտակների՝ սա աւազակ է, սա յիմար է, սա ծախուած է եւ այլն: Բնականաբար, մեր գործիչները սիրում են լսել միայն կողմնակիցներին, զինակիցներին եւ (եթէ իշխանութիւն են) «չեստյորկեքին»: Այդպիսով, ստեղծւում են փակ շրջանակներ, որոնք եփւում են սեփական կաթսայի մէջ, իսկ փակ տարածքներում երկար մնալը եւ մաքուր օդ չշնչելը բերում է տարբեր տեսակի վիրուսների տարածմանը: Այս դէպքում գլխաւոր «վիրուսներն» են մեծամտութիւնը, անհանդուրժողականութիւնը եւ անսխալականութեան բարդոյթը:

Օրինակ, իշխանութիւնը բերում է հետեւեալ փաստարկը. ինչպէ՞ս են այն ուժերը, որոնք չէին մասնակցել խորհրդարանական ընտրութիւններին կամ մասնակցելիս՝ տապալուել են, հիմա պատրաստւում յաղթել նախագահական ընտրութիւններում: Արժէ այդ հարցը լսելիս մի երկու րոպէ մտածել, ոչ թէ միանգամից բացականչել՝ խորհրդարանական ընտրութիւնները կեղծուած էին: Ընդունենք, որ այդպէս է: Այդ դէպքում հիմա ինչո՞ւ չի կեղծուի: Լեւոն Տէր-Պետրոսեանի մասնակցութեան պատճառո՞վ: Դա էլ, ինձ թւում է, մի հեքիաթ է: Վերցրէք դպրոցի ցանկացած տնօրէնի, որը սովորաբար նաեւ տեղամասային ընտրական յանձնաժողովի նախագահ է: Նա այնքան է ընկղմուած կոռուպցիայի մէջ, որ, հրահանգի դէպքում, հարազատ մօր դէմ էլ կը կեղծի, ոչ միայն Լեւոնի:

Կամ՝ մեր այսօրուայ խնդիրների խնդիրն է դատական համակարգի կախուածութիւնը գործադիրից: Ի՞նչ են առաջարկում մեր յարգարժան ընդդիմադիրները, եթէ հաշուի չառնենք հաւաստիացումները՝ «մենք լաւ տղերք ենք՝ դատաւորներին անկախութիւն կը տանք»: Յայտնի չէ: Միւս կողմից՝ յայտնի է իշխանութիւնների «շուստրիութիւնը». նրանք իբր «սահմանադրական բարեփոխում» են կատարել. այժմ դատաւորներին նշանակում-հանում է ոչ թէ նախագահը, այլ նրա գրպանում գտնուող Արդարադատութեան խորհուրդը:

Այդ եւ բոլոր մնացած հարցերի հանդիստ, բարեկիրթ խնդիրների քննարկման համար պէտք են չէզոք տարածքներ, հարթակներ: Դրանց դերը կարող են ստանձնել հեռուստատեսութիւնը, մամուլը, մամուլի ակումբները: Բայց դա էլ գրեթէ չի յաջողւում՝ մի շարք շատ սուբիեկտիւ պատճառներով: Դրա մասին էլ մի օր կը խօսենք:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
«ԱՌԱՒՕՏ»

# ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ՏԱՐԵԼԻՑԻ ՇԵՄԻՆ

Հայաստանի հանրապետական կուսակցութիւնը հոկտեմբերի 26-ին Երեւանի «Հրազդան» մարզադաշտում համերգ է կազմակերպում: Իհարկէ, ինքնին հասկանալի է, որ այս համերգը հանրապետականների խուճապի հերթական դրսեւորումն է. նրանք այնքան են վախեցած Հոկտեմբերի 26-ին Ազատութեան հրապարակում կայանալիք հանրահաւաքից, որ որոշել են հնարաւոր բոլոր միջոցները կիրառել՝ այդ խուճապը թաքցնելու համար: Ինչ խօսք, սեփական հիստերիան թաքցնելուն ուղղուած մեթոտների ընտրութեան մէջ իւրաքանչիւրն էլ ազատ է: Տուեալ դէպքում, սակայն, ՀՀԿ-ական վերնախաւը ստիպուած է ցուցադրել նաեւ սեփական անբարոյականութիւնը: Պատկերացնո՞ւմ էք, թէ ինչ աստիճանի պէտք է ընկնել՝ Երրորդ հանրապետութեան պատմութեան ամենաողբերգական իրադարձութեան՝ Հոկտեմբերի 27-ի տարելիցի շեմին զուարճանք կազմակերպելու համար: Ընդ որում՝ սա անում է այն կուսակցութիւնը, որի լիդերը, առաջնորդը, այն մարդը, որ այս կուսակցութիւնը դարձրել է իշխող քաղաքական ուժ, եղել է ոճրագործ Նաիրի Յունանեանի հիմնական թիրախներից մէկը: Բայց փաստը մնում է փաստ, եւ այն, որ ՀՀԿ-ականները, այնուամենայնիւ, գնում են նման տօնախմբութեան, նշանակում է՝ Հոկտեմբերի 27-ը նրանց համար այլեւս տօն է: Եւ իսկապէս՝ հիմա ՀՀԿ-ում ծաղկում են նրանք, եւ ընդհանրապէս՝ իշխանութեան վերնախաւում նրանք են, ովքեր բացառապէս Հոկտեմբերի 27-ի, այսինքն՝ Նաիրի Յունանեանի ծնունդ են: Եթէ Հոկտեմբերի 27-ը չլինէր, այդ մարդկանցից շատերի կարիերան ընդհատուելու էր, իսկ ոմանք էլ ընդհանրապէս չէին յաղթահարելու կօշիկ փայլեցնողի իրենց կարգավիճակը: Բայց հիմա հիմնական պրոբլեմը հենց դա է, որ սպասարկուները յայտնուել են ղեկի մօտակայքում, եւ ահա՝ նրանք չեն ուզում վերադառնալ ի վերուստ իրենց տրուած կարգավիճակին ու, բնականաբար, որպէս կուռք պէտք է պաշտեն Նաիրի Յունանեանին: Ինչ վերաբերում է բուն համերգին, հասկանալի է, որ այն որեւէ կերպ չի կարող խոչընդոտել Ազատութեան հրապարակում կայանալիք հանրահաւաքին: Ու եթէ անգամ ՀՀԿ-ական Ռազմիկ Զոհրաբեանը որոշի այդ օրը բեմի վրայ ստրիպտիզ ցուցադրել, դժուար թէ դա որեւէ կերպ խոչընդոտի հանրահաւաքի ընթացքին: Ծերունի ալկաշների ինքնամերկացումը, ցաւօք, Հայաստանում արդէն սենսացիա էլ չէ:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

# ԼՈՒՐԵՐ

## ՔՈՉԱՐԵԱՆ-ՍԱՐԳՍԵԱՆ ՎԵՐՆԱԽԱՒԱՅԻՆ ՄՐՑԱԿՑՈՒԹԻՒՆ


ՍԻՄ ղեկավար Հրանդ Խաչատրեան

ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»: Ռոբերդ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը թէեւ մրցակցում են իշխանութիւնը բաժանելու հարցում, այդուամենայնիւ նրանց միջեւ մեծ տարաձայնութիւն չկայ, եւ նրանք միշտ էլ կը պայմանաւորուեն իշխանութեան բաժանման հարցում: Այդ տեսակէտի հեղինակն է ՍԻՄ ղեկավար Հրանդ Խաչատրեանը, ով Հոկտեմբերի 22-ին Ուրբաթ ակումբում պատասխանել է լրագրողների հարցերին: Հրանդ Խաչատրեանի խօսքով, Ռոբերդ Քոչարեանը կը ցանկանար վարչապետ լինէր այլ նախագահի պարագայում, քան Սերժ Սարգսեանն է, որպէսզի աւելի քիչ կիսի իր ունեցած իշխանութիւնը:

«Իսկ Սերժ Սարգսեանի հետ հաւանաբար նա պէտք է շատ բան կիսի երկիրը ղեկավարելու հարցում: Իսկ Սերժ Սարգսեանն էլ կը ցանկանայ վարչապետ ունենալ մի աւելի համեստ գործչի», ասում է Հրանդ Խաչատրեանը: Նրա խօսքով, այդ ցանկութիւնները սակայն չեն նշանակում, որ նրանք կարող են ունենալ լուրջ տարաձայնութիւններ:

«Եթէ դիտարկենք, որ նրանք իշխանութիւնը եւս մէկի հետ պէտք է կիսեն, այդ ժամանակ իհարկէ հնարաւոր է, որ այնպիսի իրավիճակ առաջանայ, որ նրանք երկուսը միասին չցանկանան իրենց բաժինը, իրենց երկուսի բաժինը մէկ ուրիշի հետ կիսել: Հենց սա է կարեւորը, որ մենք տեսնում ենք այն մրցակցութիւնը, վերնախաւային մրցակցութիւնն այդ մասով տեսնում ենք, բայց ինչ որ տեղ փորձում ենք աւելին վերագրել դրան, քան այն մրցակցութիւնը, որ ինչ որ տեղ թէ տեսանելի է, թէ բացատրելի», ասում է Հրանդ Խաչատրեանը: Նրա խօսքով, այդ մրցակցութիւնն ընթանում է, քանի որ դեռ կայ նախագահի ընտրութեանը ժամանակ:

## ԳԷՈՐԳ ԴԱՆԻԷԼԵԱՆ. «ՍԷՖԻԼԵԱՆԻ ԵՒ ՄԱԼԽԱՍԵԱՆԻ ՀԱՄԱՐ ԲԱՑԱՌՈՒԹԻՒՆ ԱՆԵԼՈՒ ԻՐԱՒԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ ՉԿԱՆ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հայաստանի Արդարադատութեան նախարար Գէորգ Դանիէլեան Հոկտեմբեր 23-ին «Ազատութիւն» ռադիոկայանին յայտնել է, թէ տեղեակ է, որ Ժիրայր Սէֆիլեանը եւ Վարդան Մալխասեանը դիմել են «Երեւան-Կենտրոն» քրէկատարողական հիմնարկում մնալու համար, սակայն տեղափոխուել են «Վարդաշէն» քրէկատարողական հիմնարկ:

«Բացառութիւն անելու համար իրաւական հիմքեր չկային», - ասել է նախարարը՝ աւելացնելով, որ Ազգային ժողովի պատգամաւոր Զարուհի Փոստանջեանին խոստացել է «քննարկել եւ պատասխան տալ»:

Ժիրայր Սէֆիլեանը, որը 1,5 տարուայ ազատազրկման է դատապարտուել ապօրինաբար զէնք պահելու համար, եւ Վարդան Մալխասեանը, որը 2 տարուայ ազատազրկման է դատապարտուել սահմանադրական կարգը բռնութեամբ փոխելուն ուղղուած հրապարակային կոչերի համար, գրաւոր դիմել էին «Երեւան-Կենտրոն» քրէկատարողական հիմնարկի ղեկավար Համլետ Խլղաթեանին՝ խնդրելով իրենց չտեղափոխել այլ մեկուսարան, որպէսզի հարազատների համար յաւելեալ դժուարութիւններ չստեղծուեն տեսակցութիւնների ժամանակ:

Հոկտեմբերի 17-ին՝ նոր կալանավայր համնելուն պէս, երբ ստուգւում էին Ժիրայր Սէֆիլեանի անձնական իրերը, խօսակցութիւն է տեղի ունեցել Սէֆիլեանի եւ քրէակատարողական հիմնարկի պետի տեղակալ Սամուէլ Պետրոսեանի միջեւ, որի ընթացքում Սէֆիլեանը յայտարարել է, թէ «Հայաստանում դատարաններ ու դատաւորներ չկան եւ բոլորը քաղաքական պատուէր կատարող շարքային կաշառակերներ են»:

Միջադէպի մասին «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցել է Սէֆիլեանի շահերի պաշտպան Արա Զաքարեանը: Նրա վկայութեամբ՝ յաջորդ օրը քրէկատարողական հիմնարկի պետի տեղակալը միջադէպի վերաբերեալ զեկուցագիր է ներկայացրել իր ղեկավարին՝ նշելով, որ դատապարտեալ Սէֆիլեանը «վիրաւորանք է հասցրել պետականութեանը եւ իր հետ «դու»-ով է խօսել»: Արդիւնքում քրէկատարողական հիմնարկի ղեկավարութիւնը նկատողութիւն է յայտարարել Ժիրայր Սէֆիլեանին:

Արա Զաքարեանի կարծիքով՝ նկատողութիւնը կարող է պատճառ դառնալ, որ Ժիրայր Սէֆիլեանը պայմանական վաղաժամկէտ չազատուի պատժի կրումից, ինչը սպասւում էր Նոյեմբերին:

## ԿՈԼՖԻ ՀՐԱՊԱՐԱԿ՝ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ՄՕՏ

Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի տնօրէն Հայկ Դեմոեանը «Տեսակէտ» ակումբում ասաց, թէ ինքը ստիպուած լռում է շատ փաստերի մասին, որ դրանք չօգտագործուեն մեր հակառակորդների կողմից, սակայն նաեւ նկատում է, որ ոմանք օգտւում են այդ լռութիւնից: Թերեւս այս համատեքստում կարելի է դիտարկել նրա բացայայտումը, որ Ծիծեռնակաբերդում՝ մարզահամերգային համալիրին յարակից հատուածում, «երկու ռեստորանային քարէ շէնք է կառուցւում, իսկ շրջակայքում՝ աւելի մօտ Եղեռնի զոհերի յուշարձանին, Կոլֆի փոքրիկ խաղահրապարակ»: Յիշեցրեց նաեւ, որ Ցեղասպանութեան թանգարանի ենթակայութեան ներքոյ գտնուող տարածքում գործում է «Ակոռի» ռեստորանը:

## ՄԻ ՄԻՋԱՄՏԷՔ ԶԼՄ-ՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆԸ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Մի շարք հասարակական կազմակերպութիւններ մտահոգութիւն են յայտնել վերջին շաբաթուայ ընթացքում խօսքի ազատութեան ոլորտում նկատուող բացասական եւ անընդունելի երեւոյթների վերաբերեալ: Յայտարարութիւնում ասւում է.

«Տպագիր լրատուամիջոցները գրել են, որ տարբեր մամուլի ակումբներում կազմակերպուող ասուլիսներին արդէն մի քանի օր է չեն ներկայանում հեռարձակուող ԶԼՄ-ների թղթակիցները: Ենթադրութիւն է արուել, թէ նման վերաբերմունքը հրահանգաւորուած է իշխանութեան տարբեր օղակների կողմից: Մենք հասկանում ենք, որ լրատուամիջոցները պարտաւոր չեն լուսաբանել բոլոր ասուլիսները, սակայն հանրային նշանակութիւն ունեցող իրադարձութիւնների նկատմամբ միաժամանակեայ եւ միահամուռ անտարբերութիւնը միայն հաստատում է «անտեսանելի ձեռքի» միջամտութեան մասին վարկածը:

Մեզ են հասնում մտահոգիչ տեղեկութիւններ այն մասին, որ վերջին շաբաթում մասնաւոր հեռուստաընկերութիւնների ղեկավարները հրաւիրւում են զանազան գերատեսչական մարմիններ, որտեղ նրանց «յորդորում են» անտեսել ընդդիմութեան որոշ ներկայացուցիչների հանրային միջոցառումները, հրապարակային ելոյթները, չհիւրընկալել նրանց, հարցազրոյցներ չունենալ եւ չհեռարձակել: Մասնաւորապէս՝ հեռուստաընկերութիւններին «խորհուրդ է տրուած» չլուսաբանել (ոչ դրական, ոչ բացասական համատեքստով) մի քանի քաղաքական ուժերի Հոկտեմբերի 26-ին կայանալիք հանրահաւաքը:

Մենք յիշեցնում ենք, որ լրագրողների օրինական մասնագիտական գործունէութիւնը խոչընդոտելը քրէօրէն պատժելի արարք է: Աւելին՝ ՀՀ Քրէական օրէնսգրքի 164 յօդուածի երկրորդ մասը վերաբերում է պաշտօնատար անձի կողմից իր պաշտօնեական դիրքն օգտագործելով նոյն արարքը կատարելուն: Զունենալով ընդհանուր քաղաքական համակրանքներ ու հակակրանքներ, մենք բոլորս հրատապ անհրաժեշտութիւն ենք համարում կարծիքների եւ տեղեկութիւնների ազատ տարածումը, յատկապէս նախագահական ընտրութիւնների նախօրեակին եւ կոչ ենք անում իշխանութիւններին՝ ձեռնպահ մնալ լրատուամիջոցների, առաջին հերթին՝ հեռարձակուող ԶԼՄ-ների խմբագրական անկախութեանը միջամտելուց, քանի որ դա անուղղելի վնաս է հասցնում խօսքի ազատութեանն ու բազմակարծութեանը՝ ժողովրդավարութեան հիմնարար սկզբունքներին»:

Յայտարարութիւնը ստորագրել են՝ Երեւանի մամուլի ակումբը, Խօսքի ազատութեան պաշտպանութեան կոմիտէն, Գիւմրիի լրագրողների «Ասպարէզ» ակումբը, Վանաձորի մամուլի ակումբը, Հայաստանի հելսինքեան կոմիտէն, Հելսինքեան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենեակը:

## ԳԱԼԱ-Ն ԹՈՅԼ ՉԻ ՏԱՅ ՄԻՋԱՄՏԵԼ ՍԱԿԱՅՆ...

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Իշխանութեան տարբեր օղակների կողմից Գիւմրի ԳԱԼԱ հեռուստաընկերութեան դէմ վերջին շաբաթուայ ընթացքում ծաւալած գործողութիւնների պատճառով, հեռուստաընկերութեան հիմնադիր Վահան Խաչատրեանն արել է հետեւեալ յայտարարութիւնը: Ի դէպ, այդ միջամտութիւնները սկսուել են, երբ ԳԱԼԱ-ն ցուցադրել Լեւոն Տէր-Պետրոսեանի Սեպտեմբերի 21-ի ելոյթը:

«Զանգուածային լրատուամիջոցը կոչուած է օբիեկտիւ եւ բազմակողմանի ներկայացնելու եւ լուսաբանելու հասարակական բոլոր գործընթացները: Այն պէտք է հասարակութեանը հաւասարաչափ ներկայացնի քաղաքական գործընթացների ողջ սպեկտրը՝ եզրակացութիւն անելու իրաւունքը թողնելով ժողովրդին:

Գիւմրիի Անկախ Լրատուական Ալիքը (ԳԱԼԱ) ստեղծուել եւ ձեւաւորուել է հենց այդ սկզբունքների հիման վրայ եւ իր երկամեայ գործունէութեան ընթացքում մնացել է այդ սկզբունքներին հաւատարիմ: Ուզում եմ շեշտել, որ ԳԱԼԱ հեռուստաընկերութեան դիրքորոշումը այսուհետ եւս չի փոխուելու, եւ ես, որպէս ընկերութեան սեփականատէր, թոյլ չեմ տայ միջամտութեան որեւէ փորձ որեւէ կառոյցի կամ անհատի կողմից»,-ասւում է: ԳԱԼԱ հեռուստաընկերութեան հիմնադիր Վահան Խաչատրեանի յայտարարութեան մէջ:

Սակայն, Հոկտեմբեր 23-ին ԳԱԼԱ հեռուստաընկերութիւն են այցելել ՀՀ կառավարութեանն առընթեր Հարկային պետական ծառայութեան 6 ներկայացուցիչներ, եւ պաշտօնապէս տեղեկացրել ԳԱԼԱ-ի հիմնադիր Վահան Խաչատրեանին, որ 3 օրից գալու են «հերթական ստուգման»:

Հարկային պետական ծառայութեան ներկայացուցիչները իրենց պահել են քաղաքավարի եւ յարգալից:

## «ԿԳԲ-Ն ԿԸ ԳԱՂՏՆԱԼՍԻ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐԻՍ»

Հայաստանի Ազգային ժողովի կողմից ընդունուած «Օպերատիւ հետախուզութեան մասին» օրէնքը հերթական անգամ ապացուցեց ընդդիմութեան այն դիտարկումը, որ իշխանութիւնները յայտնուել են հոգեւարքի մէջ. նման կարծիք ունեն ՍԴՀԿ «Սարգիս Տխրունի» ուսանողական-երիտասարդական միութեան, «Այլընտրանք» հասարակական նախաձեռնութեան, ՀՀՇ երիտասարդական միութեան, «Երիտասարդ պահպանողականներ» ՀԿ անդամները:

Ըստ յայտարութեան հեղինակների՝ սոյն օրէնքի համաձայն բանաւոր ցուցմունք տալը քրէական գործ հարուցելու համար բաւարար է, կամ, ասենք, ԿԳԲ-ն, իրաւունք ունի գաղտնալսել ՀՀ իւրաքանչիւր քաղաքացու: «Նախագահական ընտրութիւններից առաջ ընդունուած այս չեկիստական օրէնքն իշխանութիւններին հնարաւորութիւն է տալիս աջ ու ձախ քրէական գործեր հարուցել եւ ԿԳԲ-ի նողկալի «Երեւան» քրէկատարողական կենտրոնը դարձնել քաղբանտարկեալների հաւաքատեղի: Դատապարտում ենք իշխանութիւնների հերթական պետական այս յանցագործութիւնն ու փաստում, որ վաղ թէ ուշ սրանք պատասխան են տալու նաեւ այս յանցագործութեան համար»,-ասւում է յայտարարութեան մէջ:

## ԼՈՒՐԵՐ

## «ԵԹԷ ՔՈՒՐԴ ԿԱՆԱՅՔ ԵՆ ԿՌՈՒՈՒՄ, ՅԱՂԹԱՆԱԿ ԿԸ ԼԻՆԻ»

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»:* Հայաստանի, ինչպէս աշխարհի տարբեր ծայրերում բնակուող 40 միլիոն քրդերը մտահոգուած են իրենց ազգակիցների ճակատագրով: Ջնայած միջազգային ճնշմանը՝ պաշտօնական Անգարան չի հրաժարւում քուրդ զինեալների դէմ Իրաքի տարածքում ռազմական գործողութիւններ սկսելու գաղափարից:

Հայաստանում բնակուող քրդերի ամենօրեայ ուշադրութեան կենտրոնում է Թուրքիայում տեղի ունեցող դէպքերը:

«Ամերիկայի պէս գերհզօր պետութիւնը իր պատուի հետ կը խաղայ, որ հետ քաշուի Թուրքական իշխանութեան կոչերից: ԱՄՆ-ը պետք է մինչեւ վերջ հայոց ցեղասպանութիւնը ընդունի, դատապարտի եւ ոչ մի անգամ չվախենայ, որ Թուրքերը կը յարձակուեն քրդերի վրայ»,- «Ա1+»-ին յայտնեց Հայաստանի քրդական համայնքի խորհրդի նախագահ Կնեազ Հասանովը:

Նա նշեց, թէ աշխարհի բոլոր պետութիւնները պետք է ընդունեն եւ դատապարտեն, Հայոց ցեղասպանութեան փաստը, որպէսզի Թուրքերը այլեւս այլ ժողովուրդների դէմ նման բան չկրկնեն:

Հայաստանաբնակ քրդերը համարում են, որ Թուրքիան այսօր ոչնչացման նման քաղաքականութիւն է որդեգրել քրդերի նկատմամբ:

«Նրանք ուզում են քուրդ ժողովրդի նկատմամբ էլ կատարել ցեղասպանութիւն: Թուրքական իշխանութիւնները իբր պայքարում են բանուորական ազատամարտիկների դէմ, բայց նրանք վրէժը լուծում են խաղաղ բնակչութիւնից,-ասաց «Քուրդիստան կոմիտէի» անդամ Դաւուդ Կարասուն,- Մահացել են խաղաղ քրդեր, որոնք ոչ մի կապ չունեն պատերազմի հետ: Թուրքական քաղաքականութիւնը չի փոխուել, ինչպէս ժամանակին ասում էին ամենալաւ հայը մեռած հայն է, հիմա էլ ասում են, որ ամենալաւ քուրդը մեռած քուրդն է»:

Հայաստանի քրդական համայնքը դատապարտում է Թուրքական իշխանութիւնների «անազգային, ռասիստական քաղաքականութիւնը, որոնք 20 միլիոնանոց քուրդ ժողովրդի ազգութիւնն են հերքում, արգելում են լեզուն»:

«Քուրդերը այսօր պայքարում են իրենց ազատութիւնների համար՝ լեզուի, մշակոյթի, կրթութեան, ազգի պահպանման համար: Մենք խստօրէն ենք դատապարտում եւ աշխարհի բոլոր քրդերն էլ իրենց ուշադրութիւնը սեւեռել են Թուրքիայի պատերազմ սկսելու իրողութեան վրայ»,- ասում է Կնեազ Հասանովը, ապա յաւելում, որ Հայաստանի քրդական համայնքը նամակներ, դիմումներ է ուղարկելու ՄԱԿ-ին, Հայաստանում գործող բոլոր դեսպանատներին եւ ՀՀ կառավարութեանը:

Թուրքական դիրքորոշումը դատապարտում են նաեւ քուրդ կանայք: Քրդերի կանանց կոմիտէի անդամ, Քուրդիստան կոմիտէի փոխնախագահ Ժենիա Ամիրեանը «Ա1+»-ին յայտնեց, որ այս դէպքերի հետ կապուած կանանց ժողով են անցկացրել, որի ժամանակ «բոլոր քուրդ կանայք արցունքն աչքերին դատապարտել են այդ ցեղասպանութիւնը»: «Այսօրուայ դրութեամբ ամէն մէկը մտածում է պետութիւնը զարգացնելու, ընտանիքի գոյատեւման մասին, սակայն Թուրքական իշխանութիւնները ագրեսիվ են տրամադրուած մեր ժողովրդի նկատմամբ, - ասաց նա,- Այսօր 15 000 քուրդ կանայք են կռւում սարերում եւ որտեղ եղան նրանք, յաղթանակը կը լինի»: Հայաստանաբնակ քրդերը չեն բացառում, որ անհրաժեշտութեան դէպքում իրենք զէնքը ձեռքին Իրաքի հիւսիսում կը պայքարեն իրենց ազգակիցների հետ կողք - կողքի Թուրքական բանակի դէմ:

## «ՀԱՐԵՑ». «ՕԼՄԵՐՏԸ ԵՒ ԷՐԴՈՂԱՆԸ ԿԸ ՔՆՆԱՐԿԵՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ»

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:* Իսրայէլի եւ Թուրքիայի վարչապետներ Էհուդ Օլմերտը եւ Ռեջեփ Էրդողանը Լոնդոնում կը քննարկեն Հայոց ցեղասպանութեան հարցը: Այդ մասին յայտնում է Իսրայէլում լոյս տեսնող «Հաարեց» թերթը:

Պարբերականի վկայութեամբ՝ Անկարան հայցում է Իսրայէլի աջակցութիւնը ամերիկեան Կոնգրեսում Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող բանաձեւ անցկացումն արգելափակելու գործում:

Թերթը փաստում է, որ Իսրայէլը պաշտօնապէս չի ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը, սակայն Թուրքերը դժգոհ են, որ հրեայ առանձին քաղաքական գործիչներ ճանաչել են հայերի ցեղասպանութիւնը:

Անկարան նաեւ գտնում է, որ ԱՄՆ-ի ազդեցիկ հրէական կազմակերպութիւնները բաւարար ճնշում չեն գործադրում Կոնգրեսի վրայ՝ Հայոց ցեղասպանութեան հարցը օրակարգից հանելու համար:

Օլմերտը եւ Էրդողանը Լոնդոն են ժամանել Մեծ Բրիտանիայի ղեկավարների հետ Իրաքի եւ Մերձաւոր Արեւելքի խնդիրները քննարկելու համար:

## ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՄԻՋԱՄՏՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀԻՒ

*Շարունակուած էջ 1-էն*

անդամներ, որոնք հանրահաւաքի Թռուցիկները կը տարածէին, ձերբակալուելով տարուեցան ոստիկանատուն, ուր ենթար-կուեցան խոշտանգումներու՝ նախքան որ ազատ արձակուին:

Լուրը տարածուելէ ետք, հարիւրաւոր մարդիկ հաւաքուեցան ոստիկանութեան շէնքի առջեւ ու պահանջեցին ազատ արձակել ընդդիմադիր գործիչները, այլապէս սպառնալով ներխուժել ոստիկանատուն:

Հարցը կարգաւորելու եւ ձերբակալուածները ազատ արձակելու համար ոստիկանատուն ժամանցին Մարդու Իրաւունքներու պաշտպան Արմէն Յարութիւնեանը, «Ժառանգութիւն» կուսակցութեան պատգամաւոր Զարուհի Փոստանջեանը, անկախ պատգամաւոր Խաչատուր Սուքիասեան: Աւելի ուշ հաւաքուած ժողովուրդին միացան նաեւ ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճեանը, ՍԴՀԿ ատենապետ Լուտմիլա Սարգսեանը, ՀԱԱԿ նախագահ Յովհաննէս Յովհաննիսեանը եւ ՆԺԿ նախագահ Արամ Կարապետեանը:

Կէս գիշերուայ մօտ ոստիկանատուն ժամանեց նաեւ Լեւոն Տէր-Պետրոսեան, որուն ժողովուրդը դիմաւորեց բացականչութիւններով եւ ծափողջոյններով:

Հայաստանի առաջին նախագահը մօտ 4 ժամ ոստիկանատան մէջ անցնելէ յետոյ, յաջողեցաւ ապահովել բոլորի ազատ արձակումը՝ 8 ժամ տեւող կալանքէ ետք:

## «ԻՐԱՆԻՆ ՁԵՌՆՏՈՒ ՉԷ ՇԱՏ ՀԶՕՐ ԱՏՐՊԷՅՃԱՆ»

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:* Հռոմում տեղակայուած Power and Interest News Report վերլուծական կենտրոնի աւագ փորձագէտ Ֆեդերիկօ Բորդոնարոն «Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցում, անդրադառնալով Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի՝ Հայաստանեան այցին, նախ յիշատակել է անուանի ամերիկացի քաղաքագէտ Սեմուել Հանթինգթոնի «Քաղաքակրթութիւնների բախում» աշխատութիւնը եւ ասել. - «Ի հեճուկս նմանօրինակ թէզերի հետեւորդների ակնկալիքների, այս դէպքը (հայ-իրանական յարաբերութիւնները) վկայում է, որ ոչ այնքան քաղաքակրթութիւններն են դրդում կազմել դաշինքներ կամ ռազմավարական գործընկերութիւններ, որքան ընդարձակ աշխարհաքաղաքական համաձայնութիւնները»:

Իտալացի վերլուծաբանի կարծիքով, Իրանին «ձեռնտու չէ շատ հզօր Ատրպէյճան». - «Նախ այն պատճառով, որ Ատրպէյճանը ամերիկամէտ է, բացի այդ, Իրանի ազերիների փոքրամասնութիւնը կարող է մարտահրաւէր նետել Թեհրանի կենտրոնական իշխանութիւններին»:

«Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ «Ահմադինեժադը Երեւան է մեկնում Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի՝ Թեհրան կատարած այցից կարճ ժամանակ անց, ուստի, հնարաւո՞ր է խօսել եռակողմ հայ-իրանա-ռուսական համագործակցութեան մասին», վերլուծաբան Բորդոնարոն ասել է. - «Ռուսաստանի համար Հայաստանը եւ Իրանն այն առանցքն է, որը թոյլ կը տայ ռուսական ազդեցութեան գօտին հասցնել մինչեւ Պարսից ծոց: Եւ, իհարկէ, հարկ է յիշել, որ Ռուսաստանն Ատրպէյճանի հետ էլ նոյն խնդիրներն ունի, որովհետեւ Ատրպէյճանը Ռուսաստանի փոխարէն հետզհետէ կողմնորոշւում է դէպի Արեւմուտք եւ ՆԱՏՕ»:

«Ռուս-հայկական-իրանական ռազմավարական գործընկերութիւնը էներգետիկ անվտանգութեան, էներգետիկ ծրագրերի, հետախուզական տեղեկութիւնների փոխանակման բնագաւառներում չափազանց օգտաւէտ է Ռուսաստանի համար այն դէպքում, եթէ Ռուսաստանը ցանկանում է կանխել ԱՄՆ-ի ներթափանցումը Հարաւային Կովկաս», - ասել է Power and Interest News Report վերլուծական կենտրոնի աւագ փորձագէտ Ֆեդերիկօ Բորդոնարոն:

«Այս պահին Մոսկուայում Իրանը աւելի շատ դիտում են համագործակցող, քան մրցակցող երկիր Հայաստանում, բայց միջնաժամկէտ հեռանկարի առումով, Իրանը Կասպիցի տարածաշրջանում Ռուսաստանի համար կարող է մրցակից դառնալ, ուստի, չեմ բացառում, որ Ռուսաստանը վերանայի Իրանի հետ համագործակցութիւնն այն դէպքում, եթէ, օրինակ, ԱՄՆ-ի հետ համաձայնութեան հասնի Արեւելեան Եւրոպայում կամ Հարաւային Կովկասում առկայ որեւէ խնդրի շուրջ», - ասել է նա:

## ՆՈՐԱԳԻՐՆԵՐ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵՑԻՆ

*Շարունակուած էջ 1-էն*

Ամերիկայի Վարիչ մարմինի անդամները:

Նորագիրներուն իր խօսքը ուղղելով Ընկ. Աճէմեան ըսաւ, որ գիտակցաբար մուտք գործելով կուսակցութեան շարքերէն ներս, իրենք ոչ միայն կը դառնան Հնչակեան մեծ ընտանիքի անդամը, այլեւ յանձնառու կ՚ըլլան, հետեւելու Հնչակեան գաղափարախօսութեան եւ աւելի մեծ նուիրումով գործելու ի շահ Հայ ժողովուրդին:

Կնքահայրութեամբ ընկերներ Վահէ Աջապահեանի եւ Վարդան Քորողլեանի, նորագիրները իրենց աջ ձեռքը վեր բարձրացնելով, Հնչակեան դրօշի վրայ կատարեցին իրենց երդումը:

Երդման արարողութեան յաջորդեց Խրախճանք՝ Հ.Մ.Մ.-ի «Կարօ Սողանալեան» սրահէն ներս: Ազգային-յեղափոխական երգերով երեկոն խանդավառեցին Սիրուած երգիչ Հրաչ Պողարեան եւ Լոնտոնէն ժամանած հայրենի արուեստագէտ Սամուէլ Վարդանեան: Սրահը լեցուցած շուրջ 200 ընկերներ եւ համակիրներ, մինչեւ առաւօտեան կանուխ ժամերը ապրեցան անմոռանալի պահեր:

## ԻՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ

*Շարունակուած էջ 1-էն*

Հայաստանի նախագահի մամլոյ խօսնակ Վիկտոր Սողոմոնեան յայտնած է, որ Հայաստանի եւ Իրանի ղեկավարները միաւնաբար համաձայնած են փոփոխութեան ենթարկել այցելութեան յայտագիրը եւ Մահմուտ Ահմատինաճատ անհետաձգելի պատճառներով նախատեսուածէն շուտ վերադարձած է իր հայրենիքը:

Միւս կողմէ սակայն, Իրանի նախագահը ժամանելով Թեհրան հերքած է, թէ ժամանակէն կանուխ ընդհատած է Հայաստան կատարած այցը: «Այցը Հայաստան աւելի երկար տեւեց, քան ծրագրուած էր նախապէս»,- ԻՌՆԱ գործակալութեան համաձայն յայտարարած է նախագահ Ահմատինաճատ Թեհրանի օդակայանին մէջ:

Երկուշաբթի, Հոկտեմբեր 22-ին նախագահ Մահմուտ Ահմատինաճատ ժամանելով Երեւան, հանդիպումներ ունեցած է Հայաստանի ղեկավարութեան հետ: Կայացած բանակցութիւններու աւարտին ստորագրուած է փոխըմբռնման յուշագիր Հայաստանի Հանրապետութեան եւ Իրանի Իսլամական Հանրապետութեան միջեւ:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

## ՅԱՐՑԱԶՐՈՅՑ ԱԺ ՆԱԽԿԻՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ԳՈՒՐԳԷՆ ԵՂԻԱԶԱՐԵԱՆԻ ՅԵՏ

# «ԿԼԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՒՈՒՄ Է ՓԱԽՈՒՍՏԻ»

- Պարոն Եղիազարեան, Յոկտեմբերի 26-ի հանրահաւաքի օրը, երբ նախատեսուած է ՅՅ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի ելոյթը, Յանրապետական կուսակցութիւնը «Յանրապետական» մարզադաշտում «Ոսկէ աշուն» միջոցառում է կազմակերպում: Ի՞նչ էք կարծում, այդ միջոցառումը յատո՞ւկ է արուած, եւ որքանո՞վ այն կարող է խանգարել հանրահաւաքին:

*- Դեռ Հին Հռոմում ստրուկների համար 7-12 օրով տօնախմբութիւններ էին կազմակերպում: Եւ ստրուկներն անհամբեր սպասում էին 1-2 շաբաթուայ տօնախմբութիւններին: Այսինքն՝ դա նոր բան չէ եւ մեր իշխանութիւնների յայտնագործութիւնը չէ: Նման միջոցառումներից, ինչպիսին է Հոկտեմբերի 26-ի հանրահաւաքը, իշխող կլանը վախենում է, եւ զուգահեռ միջոցառումներ կը կազմակերպեն ոչ միայն Հանրապետական մարզադաշտում, այլ նաեւ խոշոր հրապարակներում համերգներ կը կազմակերպեն, որպէսզի հնարաւորինս պակասեցնեն Ազատութեան հրապարակում սպասուող հանրահաւաքի մասնակիցների թիւը: Բայց պէտք է ասեմ, որ դա ոչ մի նշանակութիւն չի ունենալու: Հոկտեմբերի 26-ի հանրահաւաքն Ազատութեան հրապարակում կը լինի բազմահազարանոց, քանի որ ժողովուրդը շատ երկար է սպասել այս հանրահաւաքին:*

- Այսօր շատերը չեն հաւատում, որ Լեւոն Տէր-Պետրոսեանը կարող է առաջադրուել, իսկ եթէ առաջադրուի էլ, ոմանք կարծում են, որ յաղթելու որեւէ շանս չունի: Ինչպէ՞ս էք գնահատում ներկայ քաղաքական վիճակը, եւ ձեր կարծիքով՝ ի՞նչ զարգացումներ կարող են տեղի ունենալ:

*- Իշխանութիւնները փրփուրը բերաններին ցանկանում են ամէն կեղծիքով հաւատացնել հայ ժողովրդին, որ Լեւոն Տէր-Պետրոսեանը չի առաջադրուելու եւ յաղթելու շանս չունի, քանի որ մտածում են, որ իրենց վախճանը մօտ է: Այսօր ղարաբաղեան կլանից ազատուելու միակ պարզ եւ ամենակարճ ճանապարհը Լեւոն Տէր-Պետրոսեանի առաջադրումն է: Ես արդէն ասել եմ, որ նա կը դառնայ այն առանցքային ուժը, որը մեր հայրենիքը կը փրկի օկուպացիայից: Իսկ Հայաստանն այսօր օկուպացուած է:*

- Ո՞ւմ կողմից:

*- Ղարաբաղեան կլանի: Տեսէք՝ քանի որ ընդդիմութիւնը չունի հեռուստաեթեր, եւ տպագրական մամուլը, բնականաբար, այն տարածումը չունի Հայաստանում, կլանը իր վերջին դրամագլուխն է քամում ժողովրդից: Իրենք հեռուստատեսութեամբ ներկայացնում են պայծառ ապագայ, թոշակի 60 տոկոս բարձրացում (այսօր աւելի քան կէս միլիոն թոշակառու ունենք), եւ մենք չունենք մի միջոց, որպէսզի հայ ժողովուրդը տեղեկանայ, թէ իրականում ի՞նչ է կատարւում: Թոշակների այդ 60 տոկոս աճը նրանք արդէն մի 120 տոկոսով ապահովել են:*

- Ինչպէ՞ս են ապահովել:

*- Երբ մենք ասում ենք ղարաբաղեան կլան, մենք հասկանում ենք, որ մենք ոչ թէ ապրում ենք շուկայական յարաբերութիւններում զարգացող մի երկրում, այլ ապրում ենք կլանային երկրում: Շուկայական յարաբերութիւնները կլանից տարբերւում են այն բանով, որ վերջինում աճում է մոնոպոլիստական կապիտալիզմը: Այսինքն՝ սննդամթերքի 99 տոկոսը գտնւում է ղարաբաղեան կլանի ձեռքում: Եթէ նոյնիսկ հենց այդ ներկրող ֆիրմաները ղարաբաղցիները չեն, ապա ուղիղ ծառայում են կլանին: Մայիսի 12-ի ընտրութիւններից ընդամէնը 2 օր յետոյ ալիւրը թանկացրեցին 30 տոկոսով: Սննդամթերքը, ընդհանուր առմամբ, թանկացաւ մօտ 40 տոկոսով: Այսօր արդէն իրենք են գրանցում, որ, օրինակ, ձէթի գինն աճել է 110 տոկոսով: Դրանք այն արհեստական թանկացումներն են, այն գումարներն են, որոնց մի մասը պէտք է օգտագործուի ընտրակաշառքների եւ ընտրութիւնները խեղաթիւրելու գործընթացի ժամանակ, եւ դրան զուգահեռ յամենայնդէպս նաեւ գումարներ են դիզում՝ փախչելու համար: Վերջին պաշարներն են հաւաքում՝ փախչելու համար: Վառելիքը նոյն վիճակում է գտնւում, սննդամթերքը նոյն վիճակում է: Ցանկացած մի բան, որտեղից գումար է դուրս գալիս, գտնւում է ղարաբաղեան կլանի ձեռքում: Եւ ասեմ, որ իշխանութիւնների հոգեվարքը կը գրանցուի Հոկտեմբերի 26-ին Ազատութեան հրապարակում:*



- Կարծում էք՝ այդ օրն Ազատութեան հրապարակում կը հաւաքուի՞ այն կրիտիկական զանգուածը, որի անհրաժեշտութեան մասին այդքան խօսւում էր:

*- Միանշանակ: Նոյնիսկ կանգնելու տեղ չի լինելու Ազատութեան հրապարակում: Յիշո՞ւմ էք, ընտրութիւններից առաջ գործող կլանը մի քանի հաւաքներ կազմակերպեց, շոուներով բերեց երգիչներին: Եւ դա էլ բաւական չեղաւ, ուղղակի պարտադրուած աւտոբուսներով մարդիկ էին բերում հիմնարկ-ձեռնարկութիւններից եւ այնտեղ ներկայ-բացակայ էին անում, որպէսզի ապահովեն մասսա, որպէսզի ցոյց տան, որ Սերժ Սարգսեանի կուսակցութեանն այսքան համակրողներ կան, այդքան ուժեր սատարում են Հանրապետականին: Բայց մենք գիտենք, որ այս ամէնը բլեֆ էր: Այս ամէնը ստիպողական էր: Այսօր ստիպողական ոչ մի բան չի լինելու: Ընդհակառակը, իշխանութիւններն այսօր ամէն ինչ անում են, որ խանգարեն հանրահաւաքը: Բայց միեւնոյն է, այն կայանալու է եւ լինելու է բազմահազարանոց: Մենք կ'ունենանք լեփ-լեցուն Ազատութեան հրապարակ եւ ղարաբաղեան կլանի հոգեվարքը կը սկսուի Հոկտեմբերի 26-ին:*

- Կարծում էք՝ միայն այդ հանրահաւաքը բաւակա՞ն է, որ իշխանութիւնների վերջը գայ: Ասենք, եղաւ բազմահազարանոց հանրահաւաք: Յետոյ՞:

*- Ուղղակի Հոկտեմբերի 26-ին Ազատութեան հրապարակում կը գրանցուի ժողովրդի կամքը՝ մէկ ժամ առաջ ազատուել ղարաբաղեան կլանից: Այ դա կը գրանցուի:*

- Պարոն Եղիազարեան, ՅՅԿ-ում այսօր ակնյայտ խուճապ կայ Լեւոն Տէր-Պետրոսեանի առաջադրման պատճառով, եւ շատերը կանխատեսում են, որ այդ կուսակցութիւնը կարող է ներսից փլուել: Դուք, որպէս քաղաքական գործիչ, դա հնարաւոր համարո՞ւմ էք:

*- Մենք մեր հանրապետութիւնում ականատես ենք եղել, թէ ինչպէս 1 ժամուայ ընթացքում բոլորը դարձան երկրապահ: Նոյնը կրկնուելու է: Աւելի քան վստահ եմ: Նախ դրա հիմքը կը դրուի Հոկտեմբերի 26-ին, իսկ վերջնական զարգացումը կը ստանայ, երբ Լեւոն Տէր-Պետրոսեանը կը յայտա-*

*Շար.ը էջ 21*

Հայրենիքի
եւ Ժողովուրդի
Ծառայութեան
Մէջ՝



**120–Ամեակ**

Ս.Դ.Հ.Կ.–ի 120–Ամեակի Առիթով
Մեծարանքի Հանդիսութիւն
Ի Պատիւ Վաստակաւոր Ընկերներու

Կազմակերպութեամբ՝
Ս.Դ.Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմին

Ուրբաթ **26** Հոկտեմբեր **2007**, Երեկոյեան Ժամը **8:00**–ին
Հ.Մ.Մ.–ի «Կարօ Սողանալեան» Սրահ
**1060 N. Allen Avenue, Pasadena California**

Մուտքը Ազատ

**ԱԶԳԱՅԻՆ**

# ՀԵՌԱՒՈՐ ԱՍՏՂԻ ԼՈՅՍԸ

*ԼԱԵՐՏ ՄՈՎՍԻՍԵԱՆ*



*Երկնքում հիմա այնքան աստղ չկայ, ինչքան երկրի վրայ: Երգիչ-երգչուհիներ, մարզիկներ, նորաձեւութեան ու կինոյի, թատրոնի ու կրկէսի, հեռուստատեսութեան եւ ամենակարեւորը՝ քաղաքականութեան աստղեր:*

*Հեռուստատեսութիւնն արդէն բաւական է, որ ուզես թէ չուզես, մտցնի նրանց քո տուն եւ յոգնած տառապանքով դու նայես նրանց ու չուարես: Դրա համար էլ վառւում են այդ աստղերը, մարում են ու խամրում եւ կորչում, անհետանում անհասցէ ու անյուշ:*

*Սակայն կեանքում կան իրական աստղեր, որոնց լոյսը մշտական է ու վառ, որոնք զարդարում են մեր ճանապարհը ոչ թէ մերկապարանոց թմբկահարութեամբ, այլ իսկական մարդկային տաքութեամբ:*

*Դրանց թւում է Հայաստանի Երրորդ Հանրապետութեան հիմնադիր նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանը: 1988ին սկսուած հայոց ազատագրական շարժումը ցնցեց ազգի միտքը: Հայը, բաժան-բաժան, աշխարհում սփռուած հայը մի բռունցք դարձաւ, մի մասնութիւն, մի ձայն, մի ոգի: Ահազանգը Ղարաբաղն էր, պայքարի մէջ մտած, անկախութեան ձգտող Ղարաբաղ:*

*Առաջին միտինքները, ազատ արտայայտուելու առաջին ժամերը, Մոսկուան չէր հաւատում հայ ժողովրդի միասնութեանը: Մոսկուան տեսաւ միլիոնաւոր բռունցներ եւ անսասան կամք: Հաւատ՝ սեփական պայքարի նկատմամբ: Օպերայի Թատրոնի հրապարակը տնքում էր ժողովրդական բազմութիւնից: Եւ խելօք, հաշուենկատ հայը միայն զգացմունքներով չէ, որ շարժւում էր:*

*Առաջին շարքերում մտաւորականութիւնն էր՝ գրողներ, գիտնականներ, մանկավարժներ, բժիշկներ… Ազգի սերուցքը: Անունների մի փաղանգ, որը պատիւ կը բերի իւրաքանչիւր ազգի՝ Վիկտոր Համբարձումեան, Սերօ Խանզադեան, Սիլվա Կապուտիկեան, Զօրի Բալայեան, Վարդգէս Պետրոսեան, Սերգէյ Համբարձումեան: Առաջին ձայնը նրանք էին՝ Կրեմլում մղուած ճակատամարտերում: Եւ յետոյ իրական ու հաստատակամ «Ղարաբաղ» կոմիտէի անդամներն էին, որ ուղղութիւն ու ուժ էին տալիս ժողովրդին:*

*1991 թուականի ժողովրդական հանրաքուէն «Այո» ասաց ԽՍՀՄից դուրս գալու որոշմանը: Եւ արդէն ՀԽՍՀ գերագոյն խորհրդի նախագահութեան նախագահ ընտրուած Լեւոն Տէր Պետրոսեանին միաձայն ընտրեց Հայաստանի Հանրապետութեան նախագահ:*

*Մեսրոպ Մաշտոց հին ձեռագրերի ինստիտուտի՝ Մատենադարանի աւագ գիտական աշխատակից Լեւոն Տէր Պետրոսեանը դարձաւ ազգի սիրուած ու փայփայուած հերոսը, նրա առաջնութեան ու պաշտամունքի առարկան: Հարիւր հազարանոց միտինգներում նա ոգեկոչում էր ազգին միաւորուել, դէն գցել վախն ու կապանքը, անկախութեան ու ազատութեան մունետիկ լինել:*

*Նրանք հաւատում էին, պաշտպանում, գնում նրա ետեւից:*

*Ովքեր այդ տարիներին եղել են Հայաստանում, զարմացել են տարբեր հայեացքներ ունեցող մարդկանց անսասան հաւատի վրայ: Իսկ Երեւանը դարձել էր մի մեծ, մտերմիկ տուն՝ չկար ուրիշի վիշտ, ուրիշի ցաւ: Վիշտը բոլորինն էր, յաղթանակը բոլորինը: Հայոց Համազգային Շարժումը սոսկ նոր ստեղծուած միաւորում չէր, այլ բոլորի անձնագիրը, ապրած տարիների վկայագիրը:*

*Համեստ ու խոհուն գիտնական Տէր Պետրոսեանը վճռական էր ազգին յուզող գաղափարների շուրջ:*

*600 տարուց աւելի անկախութիւնը կորցրած հայը գալիս էր իր բաղձալի երազին՝ գալիս էր թօթափելու հարիւրամեակների լուծը: Գալիս էր մաքուր աչքերով նայելու աշխարհին:*

*Երբեք դիւրին չի եղել հայի ճակատագիրը պատմութեան մեծ քառուղիներում: Այս անգամ էլ նրան խանգարեցին ոչ միայն արտաքին ահազնացող ճնշումերը, այլ նաեւ բնական աղէտները: 1988ի ահեղ երկրաշարժը ցնցեց, աւերեց Հայաստանը: Բայց նա անկարող էր հայի ոգու առջեւ: Քանդուած քաղաքների ու շէների, անօթեւան մարդկանց կողքին հարիւրաւոր մեռելներ էին, հայ մարդու դիակներ՝ մեծից մինչեւ փոքր: Վիշտն ահաւոր էր:*

*Հայը ատամը սեղմած, արցունքն աչքերին չլքեց իր պայքարի դաշտը:*

*«Ղարաբաղ» կոմիտէի ձերբակալութեանը յաջորդեց Հայաստանի անլոյս ու ցուրտ առօրեան:*

*Առաջին նախագահը չընկճուեց: Առաջին նախագահը պարզ աչքերով դիմեց իր հայրենակիցներին՝ ցրուած ողջ հողագնդում: Նրա այցը ԱՄՆ՝ հայկական մեծագոյն գաղթօճախներից մէկը, ոչ միայն օգնութեան կանչ էր, այլ նաեւ վստահութեան բանալի: Ամերիկահայերը տեսան կիրթ, խելօք, ազգասէր մարդուն, որի ազատութեան դրօշը հայրենիքի ապագայի համար է:*

*Եւ ձեռք մեկնեցին՝ Քըրք Քրքորեանից մինչեւ Վահան Շամլեանը, մինչեւ հայկական վարժարանում սովորող առաջին դասարանցին: Մարդկային տաքութիւնն աւելի էր ջերմացնում սրտերը քան ուղարկուած դոլարները: Մենք մենակ չէինք: Մեզ հետ էր աշխարհը, եւ առաջին հերթին մեր հայրենակից հայերը:*

*Սրտի մխիթարութեան համար չէր միայն, որ մեր կողքի հարեւաններն էլ այդ նոյն վիճակում էին՝ լոյս ու տաքութիւն չկար եւ Վրաստանում, եւ Ատրպէյճանում, եւ նախկին Սովետ Միութեան շատ երկրներում: Բայց այդ ցրտի, սովի, խաւարի տարիներին հայերը հաւատում էին իրենց բախտի աստղին, հաւատում էին իրենց ազգընտիր նախագահին:*

*Եւ նա էր, նա էր, որ գլխաւորեց այն ճակատամարտը, որը Մայիսի 8ին աւարտուեց լիակատար յաղթանակով: Դարեր յաղթանակներ չտեսած իր սեփական հողում հայը աշխարհին մատուցեց ամենամեծ անակնկալը:*

*Շուշիի յաղթանակը ոչ միայն ռազմավարական յաղթանակ էր, այլ կամքի եւ ոգու հրավառութիւն, որի ուղեցոյց աստղը մարաջախտը Լեւոն Տէր Պետրոսեանն էր:*

*Ճնշումների, հակասութիւնների թոհ ու բոհում նա պարզեց մեր անպարտելի եռագոյնը, որի կապոյտը խաղաղութիւնն է, կարմիրը՝ մեր յեղած արիւնը եւ ծիրանին մեր կայծը, մեր հասկը, մեր հացը: Ողջ կեանքում հին ձեռագրերը թերթած Տէր Պետրոսեանը մագաղաթների մէջ գտաւ իր ազգի պատմութեան լոյսը: Ու վառեց այդ լոյսը: Կը մոռացուի՞ արդեօք: Հայաստանի Հանրապետութիւնը Օգոստոսի 23ին ընդունուած անկախութեան հռչակագրով չէր աւարտւում: Եւ այդ հռչակագիրը, այնուհետ նոր Սահմանադրութիւնը ընդունուեցին բոլոր կողմից, բոլորի համար:*

*Տառապած Հայաստանը սկսեց շտկել իր մէջքը՝ դեսպանութիւններ բացուեցին, ուրիշ երկրների նախագահներ ընդունուեցին: Այն ինչ պետական էր սկսեց դառնալ ժողովրդի սեփականութիւնը: Եւ ինչպէս միշտ, յեղափոխական քաոսում կարգ է դարձել, գողութիւնը, սպանութիւնը, թալանը զգացնել տուին իրենց: Եւ Տէր Պետրոսեանի եւ նրա զինակիցների ջանքերով էր որ յաջողուեց աւազակների ու գողերի առաջն առնել: Շատերը թողին Հայաստանը: Գիշերները կրակոցներ արդէն չկային եւ մութի միջից անգամ մարդիկ հանգիստ էին տուն գնում:*

*Երեւանը, մեր տուֆակերտ Երեւանը տնակերով ու զինուորներով էր շրջապատուած: Բայց մարդիկ չէին վհատւում: Նրանք նոր Հայաստանի արժանի քաղաքացիներ էին: Բալահովիտում պայթում էին ռազմական բազաները: Ատրպէյճանում ու Վրաստանում՝ Հայաստան մտնող գազի խողովակները: Կաթ ու մածուն կամ նաթե գնելու համար գիշերուանից հերթեր էին գոյանում: Եւ ի հարկէ շատ հացի հերթեր:*

*Որտեղի՞ց այդքան ուժ հայ ժողովրդին, որտեղի՞ց այդքան համբերութիւն:*

*Դարերի պատմութիւնից, ապրած ու չապրած տարիների ճշմարտութիւնից: Եւ ի հարկէ՝ հաւատից:*

*Այդ հաւատի շառաւիղներից մէկն էլ Լեւոն Տէր Պետրոսեանն էր: Խորաթափանց գիտնականն ու սրատես քաղաքական գործիչը: Այդ տարիներին Հայաստանում շնչելու օդ կար: Այսինքն՝ յոյս կար, ապագայի երազներ: Հաւատ կար, ապրելու թեւեր: Այդ տարիներին Հայաստանում սէր կար իրար նկատմամբ, սէր կար երկրին, նրա հողի, նրա լոյսի նկատմամբ:*

*Մենք՝ իրար նկատմամբ:*

*Շար.ը էջ 21*



## ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑ

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ՆԻՒ ՕՐԼԻՆՔԻ ԵՒ ՊԱԹՈՆ ՌՈՒԺԻ (ԼՈՒԻԶԻԱՆԱ) ՄԷՋ

*Երեքշաբթի Հոկտեմբեր 16, 2007-ի յետ միջօրէի ժամը 5:00-ին՝ Ամենայն Հայոց Հայրապետը Իր շքախումբով Նիւ Օրլինզի օդանաւակայանը ժամանեց՝ ուր Նորին Սրբութիւնը դիմաւորելու եկած էին տեղւոյն համայնքի անդամները եւ Հապիթաթ Ֆոր Հիւմանիթի Կազմակերպութեան ներկայացուցիչներ:*

*Նիւ Օրլինզի մէջ կայք հաստատած են սակաւաթիւ հայեր՝ որոնք համախմբուած են եւ մէկ ընտանիք կազմած:*



Վեհափառը աղ ու հացով կը դիմաւորուի Պաթոն Ռուժի մէջ

*Աւանդական աղ ու հացի օրհնութենէն ետք՝ շքախումբը ներկայ գտնուեցաւ ընդունելութեան մը՝ տրուած Հապիթաթ Ֆոր Հիւմանիթի Կազմակերպութեան կողմէ Շերաթոն Պանդոկին մէջ:*

*Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայացուց Ամենայն Հայոց Հայրապետը, որ իր խօսքին մէջ ըսաւ. «Փառք եւ գոհութիւն ենք յայտնում երկնաւոր մեր Տիրոջը՝ որ հասարակական մեր կեանքում գոյութիւն ունեն այսպիսի բարեսիրական կազմակերպութիւններ, ինչպէս Հապիթաթ Ֆոր Հիւմանիթի կազմակերպութիւնը, որ Քրիստոսի պատուիրաններն ու պատգամները գործնականօրէն կեանքի մէջ են ներառնում՝ իրականանցնելով ոչ միայն աջակցութիւն եւ օգնութիւն կարիքաւորներին՝ այլ նաեւ կամուրջներ հաստատելով տարբեր ազգութիւնների մարդկանց միջեւ»:*

*Խօսք առին նաեւ Եկեղեցիներու Յարաբերութեանց Գրասենեակի տնօրէն Տ. Ռիֆֆաթ Զաքի եւ Միչիկընի Հապիթաթ Ֆոր Հիւմանիթի Կազմակերպութեան նախագահ Հայր Քէն Պէնսըն: Անոնք արտայայտուեցան Հապիթաթի կատարած գործունէութեանց մասին եւ ուրախութիւն յայտնեցին որ քանի մը տարի առաջ Հապիթաթի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեւ համագործակցութիւն տեղի ունեցած է եւ Հապիթաթը, որպէս »Գարեգին Բ. ծրագիր«, սկսած է տարին 35-40 տուներ կառուցանել Հայաստանի մէջ եւ յոյս յայտնուեցաւ որ յաջորդ տարիներուն պիտի կրկնապատկուի այդ թիւը: Այդ տուները կը կառուցուին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի անունով, ինչպէս որ Ամերիկայի մէջ տուները կը կառուցուին Միացեալ Նահանգաց նախկին Նախագահ Ճիմի Քարթըրի անունով:*

*Չորեքշաբթի Հոկտեմբեր 17-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Իր բաժինը բերաւ նոր կառուցուող տունի աշխատանքին*

*Առաւօտեան ժամը 10:00-ին՝ Նորին Սրբութիւնը եւ Իր շքախումբը այցելեցին Նիւ Օրլինզի «Երաժիշտներու Աւան»ը, ուր նոր տուն մը կը կառուցուէր Հապիթաթ Ֆոր Հիւմանիթի Կազմակերպութեան կողմէ: Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ներկայ հոգեւորականները իրենց բաժինը բերելով կառուցման աշխատանքին՝ սկսան ներկել տան պատերը: Աշխատանքի աւարտին՝ Հայոց Հայրապետը Իր խորին գնահատանքն ու շնորհակալութիւնը յայտնեց Հապիթաթ Ֆոր Հիւմանիթի Կազմակերպութեան՝ անոր կատարած մարդասիրական եւ բարեսիրական գործունէութեանց համար:*

*Ամենայն Հայոց Հայրապետը հանդիպում ունեցաւ լրագրողներու հետ եւ պատասխանեց անոնց ներկայացուցած հարցումներուն:*

*Ապա՝ վրանի մը ներքեւ հիւրասիրութիւն տեղի ունեցաւ:*

### ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ՊԱԹՈՆ ՌՈՒԺ ԿԸ ԺԱՄԱՆԷ

*Նոյն օրը, յետ միջօրէի ժամը 6:00-ին՝ Նորին Սրբութիւնը եւ Իր շքախումբը ժամանեցին Պաթոն Ռուժ, ուր դիմաւորուեցան տեղւոյն Ս. Կարապետ Եկեղեցւոյ ներկայացուցիչներուն կողմէ: Աղ ու հացի օրհնութենէն ետք, Հրաշափառի արարողութիւն տեղի ունեցաւ Ս. Կարապետ Եկեղեցւոյ մէջ, ուր Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան բարի գալուստ մաղթեց Ամենայն Հայոց Հայրապետին, որ Իր գնահատութեան եւ բարեմաղթութեան խօսքը արտասանեց: Արարողութենէն ետք՝ Նորին Սրբութիւնը օրհնեց եկեղեցւոյ կից հայկական գերեզմանատունը:*



Վեհափառը կ'օրհնէ Տէր եւ Տիկին Սարգիս եւ Նորա Գալթաքճեանները նորակառոյց ապարանքը:

*Երեկոյեան ժամը 7:30-ին՝ Ս. Կարապետ Եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն, որուն ընթացքին ներկաները մօտենալով Ամենայն Հայոց Հայրապետին Անոր Աջը համբուրեցին եւ ստացան Հայրապետական օրհնութիւններ: Սոյն ընդունելութեան ներկայ էին հայ եւ օտար հրաւիրեալներ, քոյր եկեղեցիներու առաջնորդներ:*

*Յաջորդ օրը՝ Պաթոն Ռուժի «Սիթի Գլապ»ին մէջ նախաճաշ տրուեցաւ ի պատիւ Գարեգին Բ.-ին: Այստեղ Վեհափառն իր ելոյթին մէջ հայ եւ օտար հրաւիրեալներուն խօսեցաւ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ էքիւմէնիք յարաբերութեանց, ինչպէս նաեւ Ղարաբաղեան հիմնահարցին ու ցեղասպանութեան մասին:*



Ամենայն Հայոց Հայրապետը յուշանուէր մը կը յանձնէ Պաթոն Ռուժի Ծխական Խորհուրդի ատենապետ՝ Վազգէն Գալթաքճեանին:

*Նոյն օրը՝ Վեհափառը անձնական այցելութիւն մը տուաւ ծանօթ ազգային՝ Տէր եւ Տիկին Սարգիս Գալթաքճեաններու նորակառոյց ապարանքը, օրհնեց զիրենք եւ ապա մեկնեցաւ օդակայան, միշտ առաջնորդութեամբ Ծխական Խորհուրդի ժրաջան ատենապետ՝ Վազգէն Գալթաքճեանի:*

**Massis Weekly on the Internet**
**www.massisweekly.com**

Լարք Երաժշտական Ընկերակցութիւն
ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ
LARK ANNUAL BANQUET
Grand Salon, The Queen Mary
1126 Queen's Highway, Long Beach, CA 90802
Sunday, November 4, 2007, 6:30 pm
*Come early and enjoy the wonderful view!*
Program
•LAVISH DINNER •MUSICAL PRESENTATION •DOOR PRIZES
Donation: $85.00
*For tickets and more information, please call:*
LARK office: (818) 500-9997
*Transportation to the Queen Mary from Lark may be arranged through the Lark office.*



# Տ.Տ. ՄԿՐՏԻՉ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ
## ՎԱԽՃԱՆՄԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ (1820-1907)

*ԴՈԿՏ. Տ. ԶԱՒԷՆ Ա. ՔՀՆՑ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ*

Ոգեկոչման սոյն բանախօսութիւնը տրուեցաւ Հայց. եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Խրիմեան Հայրիկի յիշատակին ձօնուած հանդիսութեան Կիրակի Հոկտեմբեր 21-ին, Առաջնորդարանի Գալայճեան հանդիսասրահին մէջ, նախագահութեամբ Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոսի:



*Ուղիղ յիսուն տարիներ առաջ, երբ Խրիմեան Հայրիկի յիսնամեայ յիշատակին Ս. Պատարագ կը մատուցանէի հեռաւոր Եթովպիոյ Ատտիս Ապէպայի հայոց Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ, կը կարդայի Երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի 1957 թուի Նոյեմբեր 17ի Կիրակի օրուան իր քարոզէն սա խօսքերը.*

*«Այստեղ, Միածնաէջ այս Տաճարի հրաշակերտ գանգակատան կողքին, սպիտակ մարմարէ տապանաքարին տակ, ամփոփուած է մարմինը Հայոց Հայրիկին: Վասպուրականի Արծիւն է իր աչքերը յաւէտ փակած: Յիսուն տարիներ անցան այդ օրէն: Յիսուն տարիներ Ս. Էջմիածինն ու հայ ժողովուրդը ապրեցան որբացած իրենց Հայրիկէն:»*

*Եւ երբ յաջորդ տարին, 1958ի Սեպտեմբերին իմ առաջին ուխտաւորի այցելութիւնը կատարեցի Հայրենիք եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին Վեհափառ Հայրապետի հրաւէրին ընդառաջելով, խոնարհեցայ եւ կարդացի հետեւեալ տապանագիրը Հայոց Հայրիկի դամբարանին վրայ:*

*«Կաթողիկոս Ամենայն Հայոց Մկրտիչ Ա Վանեցի Խրիմեան Հայրիկ, նուազող վշտից հայրենեաց հայոց: Ծնեալ ի 4 Ապրիլի 1820 ամի, վախճանեալ ի 29 Հոկտեմբերի 1907 ամի:»*

*Այսօր, ահա կանգնած Ամենայն Հայոց Հայրիկի վախճանման 100ամեակի սեմին, որ կը զուգադիպի ճիշդ շաբաթ մը ետք՝ Հոկտեմբերի 29ին, որպէս որդիական ուխտ դարձեալ կ'ոգեկոչենք յիշատակը երախտարժան Հայրապետի 87ամեայ բեղուն, տառապալից, ժողովրդանուէր, ազգանուէր, ընտանեսէր եւ բարձրօրէն օրինակելի տիպարը հանդիսացող հայ հոգեւորականին, որուն կեանքը մի քանի սերունդներ ծրարեց իր Հայրիկի եւ Մեծ Հայրիկի ոսկի սրտին մէջ, անհաւատալիօրէն պեղելով հայ ժողովուրդի եւ Հայաստանեայց Մայր Եկեղեցւոյ իսկական ակունքները, գրիչով ու մանաւանդ գործով, առաջնորդելով զինք դէպի բազմերախտ Լուսաւորչի Գահը Ս. Էջմիածին, թէ իսկ իր յառաջացեալ 72 տարիքին, երբ 1892 թուին ընտրուեցաւ Կաթողիկոս Ամենայն Հայոց, երգելէ ետք հայրենիքի վիշտը, ցմրուր ըմպելէ ետք դառնութեան բաժակը, որ բաժինը եղաւ իր հողին կապուած եւ սակայն տարագիր ու հալածական իր որդիներուն: Ի զուր տեղը չէ որ հայ ժողովուրդը անսեթեւեթ կերպով արժանի դարձուց զինք ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ անկրկնելի կախարդական եւ վսեմագոյն կոչումին: Ո՛չ անուն, ո՛չ մականուն եւ ո՛չ տիտղոս, այլ միայն ՀԱՅՐԻԿ:*

*Վազգէն Երջանկայիշատակ Հայրապետ, նոյնքան մեծ ու պատկառելի, իր խոնարհութեան ու յարգանքի շատ սեղմ տողերուն մէջ, յիսուն տարիներ առաջ ըսաւ.*

*«Գրելու համար Հայրիկի մասին, պէտք է գրիչը թաթխել հայ ժողովուրդի յոյզերու սուրբ աւազանին մէջ, զի ամէն հայ մարդ երկու հայր ունի՝ իրը եւ Ամենայն Հայոց Հայրիկը:» Անկէ առաջ նոյնիսկ, Վազգէն Հայրապետ, երբ տակաւին վարդապետ էր, 1943 թուին գրած էր իր գիրքը՝ «Խրիմեան Հայրիկ Որպէս Դաստիարակ» տիտղոսանունով ու հրատարակած Պուքրէշի մէջ:*

*Քսաներորդ դարու արշալոյսը հայոց երկնակամարին վրայ բացաւ ինքը՝ Հայոց Խրիմեան Կաթողիկոս Հայրիկը, եւ նոյն դարու լման երկրորդ կիսուն Հայրենիքին ու Հայ Եկեղեցւոյ արշալոյսը, շարականի տողերով, «արեգակնակերպ ճառագայթներու» վերածուեցաւ այս անգամ Տ.Տ. Վազգէն Ա. մեծագործ Հայրապետի երկարատեւ եւ բացառապէս բեղմնաւոր գահա-կալութեամբ, Հայոց Հայրիկի տապանաքարի հայեացքին վերեւ:*

*Երբ Խրիմեան Հայրիկ իր աչքերը կը փակէր ուղիղ 100 տարիներ առաջ, միեւնոյն ատեն, ոչ շատ հեռու Մայր Աթոռէն, կը ծնէր մանուկ մը որուն ծննդեան հարիւրամեակը ազգովին պիտի յիշատակենք շուտով: Վախճանած էր Մեծ Հայրապետը Հայրիկ, եւ ծնած էր հայ եկեղեցւոյ ապագայ կերտիչն ու բարեկարգիչը, բարձրողի, պատկառելի ու վսեմ առաքինութիւններով օժտուած ընտրեալը Աստուծոյ՝ Տ.Տ. Վազգէն Ա. Հայրապետ: Երկուքը, ընդմիջուած խայտաբղէտ ու ճակատագրական աներեւակայելի յիսնամեակով մը, քսաներորդ դարու երկու բեւեռները կազմեցին: Եւ այդ եղաւ Աստուծոյ կամքը: Եղաւ նաեւ Հայոց Խրիմեան Հայրիկի տարիներու աղօթքն ու իղձը երբ կը գրէր մարգարէաշունչ այս խօսքերը՝ 1895-ի Յունուար 8-ին.*

*«Սիրտ առէք, քաջալերուեցէք անբախտ եւ բախտաւոր պանդուխտ որդիք Հայոց, Աստուծոյ այցելութիւն մօտ է մեր չարչարեալ աշխարհին:» Տեսէք որքան զօրաւոր եղան արդար մարդուն աղօթքը, ինչպէս ըսած է Յակոբոս Առաքեալ իր Թուղթին մէջ: Աստուծոյ այցելութիւնը յիրաւի կատարուեցաւ, իսկապէս Հայրիկի ըսածին պէս, մեր աշխարհը չարչարուելէն ետք: Հայրիկը Հայոց ճակատը բաց եւ յոյսով լի հեռացաւ այս աշխարհէն ինքզինք առյաւէտ մօտեցնելով Հայոց Աշխարհին:*

*Խրիմեան Մկրտիչ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կեանքը եղաւ ինքնատիպ, արտասովոր, իր իսկ խօսքերով «Աւետեաց Երկրին Հրաւիրակ»ներու որպէս անմնացորդ պատասխան՝ հերոսապատում նուիրումով եւ համակ քաջութեամբ, դէմ յանդիման գալով 19-րդ դարու հայ ազգի եւ եկեղեցւոյ ցնցիչ կացութեանց, անցնելով ու բարձրանալով վարդապետի, խմբագիրի, գիրի եւ գրականութեան, վանահայրի, եպիսկոպոսի, առաջնորդի, պատրիարքի ու վերջապէս կաթողիկոսի անհաւասար եւ փոթորկալից աստիճաններէն, առանց ընկրկելու, միշտ Վանեցիի իր դիմադրականութեամբ:*

*Կարելի չէ 19-րդ դարու մասին խօսիլ ու լուռ անցնիլ հայոց հարիւրամեայ պատմութեան ընթացքին առանց յիշելու Հայոց Հայրիկի անմնացորդ նուիրումն ու անջնջելի կնիքը զորս ան թողուց իր ետին որպէս սրբազան աւանդ: Աւանդ մը որ հրաշալի կերպով ազուցումը եղաւ մեր ազգային, քաղաքական, ընկերային, եկեղեցական եւ մշակութային պահանջներուն, որոնց առանցքը ինք եղաւ, որպէս մէկ եւ մեծ անձ, որուն հայրախնամ թեւերը իբրեւ Արծուիկ Տարօնոյ տարածեց իր ազգի զաւակներուն վրայ անխտիր:*

*Իր ամուսնական եւ աշխարհական կեանքէն հեռանալով, իր բացակայութեանը անակնկալ մահուամբը կնոջ, աղջկան եւ իր մօրը, Խրիմեան կրթական գործին ընծայեց ինքզինք: 34 տարեկան էր, նման Վազգէն Հայրապետի, երբ 1854 Փետրուար 26-ին վարդապետ ձեռնադրուեցաւ Աղթամարի մէջ Գաբրիէլ Արքեպս. Շիրոյեանի ձեռամբ: Հոն, այդ պատմական կղզիին վրայ նախընտրեց մնալ, զայն դարձնելու համար լուսոյ փարոս ան: Բուռն ընդդիմութեանց մատնուեցաւ: Թողուց Աղթամարը ու վերադարձաւ ծննդավայր Վան, ուր իր կայքը հաստատեց այս անգամ փոխան Աղթամարի՝ Վարագայ Վանքին մէջ, աւելի ապահով եւ աւելի արդիւնալից: Ի լոյս ընծայեց «Արծուի Վասպուրականի» առաջին թիւը 1858-ի Յունուարին, կազմակերպելով նաեւ Վարագի Վարժապետանոցն ու Գրադարանը, որոնցմէ ծնան ու սնան Գարեգին Վրդ Սրուանձտեանց եւ յայտնի վիպագիր Րաֆֆի:*

*Հինգ տարիներ անց, Խրիմեան Վարդապետ 1862 թուին առաջնորդ ընտրուեցաւ Տարօնի եւ Մուշի, ուր Սուլթան Ս. Կարապետի վանքի վանահայրութիւնն ալ իր վրայ վերցուց, հրատարակելով «Արծուի Տարօնոյ» թերթը: Պա-*

*Շար.ը էջ 18*




10-րդ Միջազգային
Հայաստան Համահայկական Հիմնադրամ Թելեթոն 2007
Մեկ Ազգ Մեկ Ապագայ
ArmeniaFund
Գոհաբանութեան Օր
Նոյեմբեր 22, 2007
KSCI-LA 18 8am-8pm PST
Տեղեկութեան համար հեռաձայնել
1-800-888-8897
Կայքէջ
www.armeniafund.org

## ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

# ՊԱՏԻՒՍ ԱՐԺԱՆԱՒՈՐԱՑ ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ՝ 70-ԱՄԵԱԿ

*ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ*

Կարծես երէկ էր: Թուականէս շուրջ 15 տարիներ առաջ, մեծարանքի հանդիսութիւն մը կազմակերպուած էր գաղութէն ներս, նշելու խմբավար-երգահան Հենրիկ Անասեանի ստեղծագործական գործունէութեան 35-ամեակի առթիւ: Յիշողութեանս մէջ է տակաւին ամբողջ հանդիսութիւնը, եւ ձեռքերուս մէջ կայ այն գրքոյկը որ այդ հանդիսութեան առիթով հրատարակուած էր: Հրաշալի կազմակերպուած ձեռնարկ մըն էր որու ընթացքին տեղի ունեցան ելոյթներ մաէսթրոյի մասին, ինչպէս նաեւ ճոխ գեղարուեստական յայտագիր: Այդ առիթով ստեղծուած էր հանդիսութեան յոբելինական յատուկ մարմին մը, իր պատուական եւ գործադիր անդամներով:

Ուրեմն այդ առթիւ մենք անտեսած էինք մեզի ծանօթ «գնա մեռիր, եկուր սիրեմ» առածը եւ ուզած էինք իր ողջութեան, ստեղծագործական կեանքի մէկ հանգրուանին, յարգել վաստակաշատ մաէսթրոն:

Այդ մէկը ուրեմն տեղի կ՚ունենար 15 տարիներ առաջ: Նոյն ձեւի եւ հաւանօրէն նաեւ նոյն ընդհանուր գիծերուն մէջ ծրագրուած է նշել մաէսթրօ Հենրիկ Անասեանի ծննդեան 70-ամեակը եւ ստեղծագործական վաստակի, այս անգամ 50-ամեակը: Կարեւոր թուանշաններ են ասոնք անհատի մը կեանքէն ներս, մանաւանդ երբ այդ անհատը խմբավար, երգահան, գրական-հասարակական վաստակով անհատ մըն է, ինչպիսին է Հենրիկ Անասեանը:

Ձեռնարկի նախաձեռնութիւնը ստանձնած է նորահաստատ կրթական հաստատութիւն մը՝ «Կիլիկեան Գոլէճ» անունով եւ արդէն իսկ ստեղծուած է համագաղութային յանձնախումբ մը, պատշաճօրէն կազմակերպելու համար վերոյիշեալ մեծարանքի հանդիսութիւնը: Երեկոն նախատեսուած է Դեկտեմբեր 2, 2007 թուականին Կլէնտէյլ քաղաքի հայ սքուլի հանդիսասրահէն ներս: Նման ձեռնարկներ արդէն տեղի ունեցած են այլ գաղութներէն ներս, եւ ուրիշներ ալ կը նախատեսուին Հայրենիքէն ներս: Կազմակերպիչ կեդրոնական յանձնախումբը իր լաւագոյնը պիտի ընէ, որպէսզի սոյն մեծարանքի հանդիսութիւնը ըլլայ արժանի յարգանք մը, մեծարեալ մաէսթրոյին վաստակին եւ անձին վայել:

### ՀԵՆՐԻԿ ՆԱՍԵԱՆԻ ՎԱՍՏԱԿԸ

Յիսուն տարիներու վրայ երկարող վաստակ մը ունի Հենրիկ Անասեան, Հայրենիքէն ներս եւ արտասահմանի զանազան գաղութներէն ներս: Ան անսպառ եռանդով եւ անսահման զոհողութեամբ կարողացաւ կանգուն պահել հայ երգչախմբային արուեստն ու երաժշտութիւնը բարձրագոյն մակարդակով, միեւնոյն ատեն ոսկեայ կամուրջ մը հաստատելով Հայրենիքի եւ արտասահմանի միջեւ: Հենրիկ Անասեանի անունը ծանօթ է աշխարհով մէկ, եւ այս փոքր արժանիք մը չէ ստեղծագործ անհատի մը համար, քանի որ այդ կ՚ենթադրէ, ոչ միայն ստեղծագործական աշխատանք, այլ ֆիզիքական յոգնութիւն պահանջուած յաճախակի տեղափոխութեանց պատ-

Շար.ը էջ 23

# «ՆՈՐ ՕՐ» ՅԱՂԹԱԿԱՆՕՐԷՆ ՆՇԵՑ ԻՐ 85 ԱՄԵԱԿԸ

Կիրակի 21 Հոկտեմբեր 2007-ին, տեղի ունեցաւ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Շրջանի ՌԱԿ-ի օրկան ՆՈՐ ՕՐ-ի 85 Ամեակի նշումը, ԹՄՄ Արշակ Տիգրանեան Վարժարանի «Գարապետեան» հանդիսասրահին մէջ: Ձեռնարկը կը հովանաւորէր Թեմիս Բարեջան Առաջնորդ. Յովնան Արք Տէրտէրեան, իսկ կը նախագահէին՝ Տէր եւ Տիկ. Վարդան եւ Ալիս Նազիրեաններ:

Ընկերային հիւրասիրութեան յաջորդող հանդիսաւոր ճաշկերոյթին ներկայ կը գտնուէին խմբագիրներներ, ազգային աւանդական երեք կազմակերպութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ քաղաքական դէմքեր:

Լօրա Գույումճեանի եւ Ռիթա Աճարոնեանի աւուր պատշաճի հանդիսութեան բացման, բարի գալուստի ու ընդհանրապէս ՆՈՐ ՕՐ-ի երկար տարիներու կառուցողական առաքելութեան կապակցութեամբ անդրադարձէն ետք բեմահարթակ հրաւիրուեցաւ Փասատէնայի Սրբ. Գրիգոր Լուս. եկեղեցւոյ Հովիւ Հոգշ. Տէր Պարէտ Ծր. Վրդ. Երեցեանը: Ան, Առաջնորդ. Յովնան Արք Տէրտէրեանի ողջոյնի խօսքերը փոխանցեց ՆՈՐ ՕՐ-ի 85 Ամեակի առիթով ապա օրհնեց սեղանները:

Օրուան գլխաւոր բանախօս, Armenian Observer-ի խմբագիր Օշին Քէշիշեան, բարձր գնահատելէ ետք առանձնապէս Նոր Օրի ու անոր 85 տարիներու երկայնքին գործած ու մինչեւ օրս գործող խմբագիրներուն վաստակը, կարեւորութեամբ ընդգծեց ընդհանրապէս ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ եւ հայ խմբագիրներու դերը հայ իրականութենէն ներս:

Այնուհետեւ, գնահատական բովանդակութեամբ ելոյթներ ունեցան Հայաստանի Հանրապետութեան Գլխաւոր Հիւպատոս Արմէն Լիլոյեան, Ճէք Սքոթ եւ Կլէնտէյլի Քաղաքապետ՝ Արա Նաճարեան, որոնք գնահատական յուշագրեր յանձնեցին Յօբելեար ՆՈՐ ՕՐ-ին:

ՌԱԿի խօսքը փոխանցեց համանուն կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան անդամ Արա Աճարոնեան: Այնուհետեւ տեղի ունեցաւ յօբելինական մոմավառութիւն եւ երաժշտական կատարողութիւն (Ատիս Հարմանտեան եւ նուագախումբ),

Եզրափակիչ խօսքով հանդէս եկաւ հանդիսութեան Նախագահ Վարդան Նազիրեան որ շնորհաւորելէ ետք ՆՈՐ ՕՐ-ի 85 ամեակը իր զօրակցութիւնը յայտնեց անոր լոյս ընծայման:

''Մասիս'' իր խնդակցութիւններն ու շնորհաւորութիւնները կը յայտէ ՆՈՐ ՕՐ-ին, անոր 85 ամեակի բարեփաստիկ առիթով մաղթելով յարատեւ ու արդիւնաւէտ ապագայ:

«Մասիս»

## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր,
եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական
Միութեան գրադարանին՝ ապա առաքեցէք հետեւեալ հասցէով:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104



# Massis Weekly

**Volume 27, No. 38** **Saturday, OCTOBER 27, 2007**

## Ter-Petrosian Steps In To Free Detained Loyalists



**Former President Levon Ter-Petrosian waving to the crowd**

YEREVAN -- Former President Levon Ter-Petrosian spent four hours at a police station in Yerevan negotiating the release early on Wednesday of a dozen loyalists who were arrested while urging Armenians to take part in his rally scheduled for Friday.

The eleven detainees, most of them members of the Aylentrank (Alternative) movement, were among about a hundred Ter-Petrosian loyalists who marched through the city center on Tuesday evening to spread word of the planned rally. They were taken into custody after a scuffle with security forces led by Colonel Aleksandr Afian, deputy chief of the Yerevan police.

Eyewitnesses said the violence broke out after Afian demanded that Aylentrank leader Nikol Pashinian hand him a megaphone used during the march. Pashinian, who is also the editor of Armenia's best-selling daily newspaper, refused to obey the order, they said.

"We told Afian that his actions are illegal," Tigran, a young member of the radical opposition Hanrapetutyun party also detained on the spot, told RFE/RL. "He said, 'I am the law and you must do whatever I want.' Then he called up [special police wearing] red berets and they attacked and arrested us."

The police blamed the incident on the demonstrators, accusing them of disrupting public order. Colonel Nerses Nazarian, the Yerevan police chief said they interfered with traffic and littered streets and building entrances with leaflets advertising the Ter-Petrosian rally.

"People were complaining from their balconies that it is inadmissible to toss those papers," Nazarian told a

**Continued on page 3**

## U.S. To Again Press For Turkish-Armenian Rapprochement

The United States hopes to defuse the latest surge in Turkish-Armenian tensions and will make a fresh attempt to help normalize Turkey's strained relationship with Armenia, a senior U.S. official said on Wednesday.

Deputy Assistant Secretary of State Matthew Bryza said the controversy surrounding the possible passage of a U.S. Congressional resolution recognizing as genocide the mass killings of Armenians in Ottoman Turkey underscores the need for the two neighboring states to have diplomatic relations and an open border.

"This incident has demonstrated in America, Armenia and Turkey how important it is that there be a serious initiative to fully normalize Armenian-Turkish relations," he told RFE/RL in Yerevan.

Bryza, who was visiting the Armenian capital in his capacity as the U.S. co-chair of the OSCE Minsk Group, said he will travel to Ankara on Thursday to discuss the matter with Turkish leaders on the margins of a Black Sea economic forum. "One of my own main goals is to explore the possibility of rejuvenating efforts to bring the countries together," he said.

"The resolution will either pass or won't pass. Either way, there is still going to be this problem out there that he is behind the whole controversy over the resolution. We have to get the two sides together," he added.

**Continued on page 3**

## Turkish Extremists Destroy and Burn Armenian Cafe in Brussels

Last Monday some 200 people, belonging to a Turkish extremist movement, destroyed and set fire to the Jardin de Babylone Cafe owned by an Iraqi Armenian in the Saint-Josse neighborhood of Brussels.

Shortly before, in the evening the hooligans pulled down and burned the American flag which was hanging in front of the U.S. Embassy.

Mehmet Koksal, a Belgian journalist of Turkish origin, filmed the scene, and was severely beaten by the extremists shouting hostile and insulting U.S. slogans.

This demonstration was percipitated by the Turkish-Kurdish confrontation that has claimed lives of 12 Turkish soldiers are 23 Kurdish rebels.

20 people were in the cafe at that moment. None of them was hurt. However, a policeman, who was at the site, is reported to be injured.

## Ahmadinejad Cuts Short Armenia Visit



**Iranian President Ahmadinejad during a press conference in Yerevan**

YEREVAN -- Iranian President Mahmoud Ahmadinejad rushed back to Tehran on Tuesday, cutting short a two-day official visit to Armenia for reasons that were not immediately clear. Armenian officials linked the move with the political situation in Iran.

Ahmadinejad arrived in Yerevan on Monday and held talks with Robert Kocharian that focused on growing bilateral cooperation in the energy sector. The Iranian leader was scheduled to begin the second day of the trip with a visit to the Tsitsernakabert genocide memorial in Yerevan. He was also due to deliver a speech in Armenia's parliament and visit a 18th century Iranian mosque in the capital later in the day.

Although all of these engagements were abruptly cancelled, Ahmadinejad claimed on his return to Tehran that he did not cut short the visit. "The trip to Armenia took longer than what was scheduled before," the Iranian state news agency IRNA quoted him as saying, according to AFP. "This trip was due to last 22 hours but because of some visits, it became one hour and half longer than the schedule."

A senior Armenian Foreign Ministry official told RFE/RL, however, that Ahmadinejad did change his visit itinerary which had been agreed by both the Iranian and Armenian sides beforehand. IRNA and other Iranian news agencies themselves reported on Monday he will address the National Assembly and meet representatives of the Iranian community in Armenia on

**Continued on page 2**

## His Holiness Catholicos Karekin II Helps To Build A Home With Habitat For Humanity In New Orleans

NEW ORLEANS -- His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians is currently on a Pontifical Visit to his flock in 18 cities in 14 different states. Among his pastoral visits, His Holiness Karekin II was invited to New Orleans as the special guest of Habitat for Humanity. As part of the visit, the Catholicos helped paint a Habitat for Humanity home for a family made homeless by the devastation of Hurricane Katrina in August, 2005.

On Tuesday evening, October 16th , Habitat for Humanity hosted a reception in honor of the Catholicos with Ecumenical and Civic leaders. On Wednesday morning, His Holiness Karekin II helped to build a home in Habitat for Humanity's Musicians' Village alongside other volunteers, including His Eminence Archbishop Khajag Barsamian, Primate of the Diocese of the Armenian Church of America (Eastern). Habitat for Humanity's Musician's Village is the outgrowth of New Orleans ' native sons Winston Marsalis and Harry Connick, Jr. who helped organize the project to provide housing relief for the hundreds of thousands whose homes were destroyed by Hurricane Katrina and the failure of 53 levies along the Mississippi that resulted in the flooding over 80% of New Orlean. The storm is reported to have caused over $81.2 billion in damage, trapping more than 60,000 persons in the city and killing more than 1,577 persons in Louisiana alone.

The commitment of His Holiness Karekin II to visit New Orleans stemmed from his overall commitment to the welfare of humanity and his desire to thank the citizens of the United States who came to the assistance of Armenia in the aftermath of the devastating 1988 earthquakes that left 500,000 Armenians homeless. His Holiness' hands-on work was a demonstration of gratitude and appreciation to Habitat for Humanity – as well as a gesture of goodwill to America .

Trading his Cavazan (scepter depicting his authority as the head of the Armenian Church) for a paint brush, His Holiness Karekin II and His Eminence Archbishop Khajag Barsamian laughed and smiled while helping the new occupants of the home paint their newly constructed house. In a lighthearted conversation with family members, the Catholicos invited the family to visit Armenia .

The newly constructed Habitat for Humanity home on which the Catholicos and the Primate worked is situated on an 8-acre parcel of land which was selected for the construction of 70, single-family homes being built by volunteers, donors, sponsors and low-income families as part of a Habitat for Humanity project. Since

**Continued on page 2**

Turkish Perspective

## A Pyrrhic Victory

**By Omer Taspinar**
**todayszaman.com**

The frustration of Gunduz Aktan, former ambassador and current Nationalist Movement Party (MHP) member of Parliament said it all. Speaking at a Washington think tank, the day after the "yes" vote on the Armenian resolution at the US House Committee on Foreign Affairs, Aktan was upset for more than one reason. No doubt his disappointment was largely due to the vote itself; but he was perhaps even more irritated by Turkey's so-called friends — the 21 members of Congress who opposed the Armenian resolution. Almost none of them believed Turkey's version of history about "the events of 1915." They just believed Turkey was geo-strategically too important an ally to offend in the middle of a war where it was helping save the lives of American soldiers. Some friendship…

Aktan got the overall picture exactly right. Though the tide is turning in Turkey's favor on the Armenian resolution, it is too early to celebrate. Yes, even some of the hard-core sponsors of the Armenian resolution are backing off, however this has nothing to do with their sudden discovery of new historical facts proving Turkey is right. The real reason things are going Turkey's way is much simpler; last week the American media picked up the "genocide" story and humiliated the House of Representatives. Yet it was not a sight Aktan would have enjoyed.

The story picked up by the national media was not what happened to Armenians 90 years ago. The discussion was once again about the geostrategic importance of Turkey and bad timing. But there was also something quite disturbing as the story gained national traction on TV screens — millions of Americans were exposed to horrific pictures that they would have never seen under normal circumstances. For the average Joe, these black-and-white pictures of lifeless Armenians probably carried a vague sense of familiarity with pictures mentally associated with the Jewish Holocaust. This was a tragedy for Turkey. This Armenian genocide/Jewish holocaust parallel is exactly what the Armenian lobby wants Americans to believe and of course what Ankara rightly tries to discredit. In a matter of seconds the damage was done in the subconscious of millions of average Americans.

Of course most of the news stories did not even dwell on such "insignificant" historical details. This job was left to the horrific pictures on the background of the story. Instead, the news tirelessly bashed Congress for alienating a strategically important "Islamic" country (let the conspiracy roll!) in a difficult part of the world. And yes, the Turks were now very angry — they were getting ready to invade northern Iraq in retaliation for the Armenian resolution. A nice image of the Turk, isn't it?

Charles Krauthammer's Friday column in The Washington Post says it all. Here is how Krauthammer opens his column: "There are three relevant questions concerning the Armenian genocide. (a) Did it happen? (b) Should the House of Representatives be expressing itself on this now? (c) Was House Speaker Nancy Pelosi's determination to bring this to a vote, knowing that it risked provoking Turkey into withdrawing crucial assistance to American soldiers in Iraq, a conscious or unconscious attempt to sabotage the US War effort?"

And here is how Krauthammer answers these questions: "(a) Yes, unequivocally. (b) No, unequivocally. (c) God only knows." And here comes his dagger: "That between 1 million and 1.5 million Armenians were brutally and systematically massacred starting in 1915 in a deliberate genocidal campaign is a matter of simple historical record. If you really want to deepen and broaden awareness of that historical record, you should support the establishment of the Armenian Genocide Museum and Memorial in Washington. But to pass a declarative resolution in the House of Representatives in the middle of a war in which we are inordinately dependent on Turkey would be the height of irresponsibility."

Did Nancy Pelosi really want to cause more problems for Bush in Iraq? "I leave the answer to psychiatry," answers Krauthammer. This is the state of affairs in Washington regarding Turkey and the Armenian question. Yes, the tide has turned against the "genocide" resolution. We won an important battle, but make no mistake — we are losing the war. For now let's celebrate our pyrrhic victory.

## His Holiness Helps To Build A Home In New Orleans

**Continued from page 1**

groundbreaking began in March 2006, 40 homes have already been completed.

His Holiness Karekin II and Habitat for Humanity have signed an agreement designed to promote the construction of Habitat for Humanity homes in Armenia . The Catholicos has previously participated in Habitat for Humanity's annual home blitz build and the Jimmy Carter Work Project, where he worked along side former President Carter to build houses for low-income families. The project led to the Catholicos giving his blessing for a home-building event to be created and held in Armenia which become the His Holiness Karekin II Work Project.

In April 2006, the Armenian Church and Habitat for Humanity signed an agreement of long-term cooperation. The agreement created the His Holiness Karekin II Work Project. This was aimed at alleviating housing problems in Armenia and throughout the world. The first " Catholicos Karekin II Work Project " was held in Gavar, Armenia , where a building was renovated in partnership with 24 families. An additional 13 homes were built around the country.

## Why Did Iran's Ahmadinejad Cut Short Armenia Visit?

**RFE/RL**

Amid speculation over why Iranian President Mahmud Ahmadinejad suddenly cut short a visit to Armenia today, senior Armenian officials have told RFE/RL that it may have been due to the "deteriorating health" of Iran's Supreme Leader Ayatollah Ali Khamenei.

Ahmadinejad had arrived in Yerevan on October 22 for two days of talks with President Robert Kocharian and other Armenian officials on joint energy and transportation projects. But today, the hard-line president suddenly skipped a planned visit to a memorial for the victims of the Ottoman Turkish massacre of Armenians some 90 years ago — an event that Yerevan wants the world to recognize as genocide.

Armenian officials have said Ahmadinejad told them that he had to leave early due to unexpected developments in Iran. But upon his arrival in Tehran, the president told Iranian journalists that he had stayed even longer than planned.

Senior Armenian officials say Ahmadinejad may have left early because the health of Khamenei, long believed to be poor, had taken a turn for the worse. "There are different suggestions that some problems have arisen inside Iran connected to the health of Khamenei," leading parliamentarian Victor Dalakian told RFE/RL's Armenian Service in Yerevan.

Another Armenian official, speaking to RFE/RL on the condition of anonymity, also cited Khamenei's "deteriorating health" as a possible reason for Ahmadinejad's sudden return home.

The Iranian Foreign Ministry insisted earlier this year that the supreme leader is doing fine, despite persistent reports to the contrary.

Reports in Armenia and elsewhere have also speculated that Ahmadinejad's early departure may have been connected to an internal Iranian power struggle tied to the recent resignation of Iranian nuclear negotiator Ali Larijani, who was seen as close to Khamenei.

He was replaced by Said Jalili, who is reportedly close to Ahmadinejad. Both Jalili and Larijani were in Rome today for nuclear talks with European Union officials.

There's also has been speculation that Ahmadinejad cut short his visit to avoid planting a tree at a memorial to victims of the Ottoman massacre of Armenians — a move that some believe would have angered Turkey.

The issue made headlines after the Foreign Affairs Committee in the U.S. House of Representatives recently passed a nonbinding resolution that would recognize the killings as genocide.

"With this step, [Ahmadinejad] showed that Turkey, and relations with Turkey, are more important for Iran than Armenian sensitivities," Rasim Musabekov, a Baku-based political analyst, told RFE/RL's Azerbaijani Service. "It's a rational move, and he's done it in a smart way."

But other have noted that Turkish-Iranian ties suffered no obvious damage in September 2004, after then-Iranian President Mohammad Khatami laid flowers at the same memorial in Yerevan.

And on his trip, Ahmadinejad commented directly on the massacre, saying on October 22 that he was "against the brutality" waged on Armenians during the waning days of the Ottoman Empire.

He also said that Iranian Armenians, who constitute one of Iran's main ethnic groups, are free every year to commemorate the mass killings on April 24. He did not use the word genocide, but ethnic Armenians in Iran have a monument in Tehran which commemorates the tragedy as genocide.

## Ahmadinejad Cuts Short Armenia Visit

**Continued from page 1**

the second day of the trip.

The abrupt end of Ahmadinejad's visit coincided with the start of negotiations in Rome on Iran's controversial nuclear program. Iran's new nuclear negotiator, Saeed Jalili, was due to hold his first talks there over the atomic crisis with European Union foreign policy chief Javier Solana.

Ahmadinejad flew back to Tehran at around noon after a breakfast meeting parliament speaker Tigran Torosian, Foreign Minister Vartan Oskanian and Energy Minister Armen Movsisian. Torosian said afterwards that the visit was cut short due to unspecified "internal issues" in Iranian.

"It is not customary to discuss such issues [with foreign officials,]" Torosian told reporters. "Especially considering the fact the visit was not initiated by the National Assembly."

"Mr. Ahmadinejad asked me to tell our parliamentarians that he regrets the need to interrupt the visit and return to Iran and that he will not be able to visit the parliament," he told the National Assembly later in the day.

Deputy Foreign Minister Gegham Gharibjanian, who was also present at the meeting, said the Iranian side presented "very serious arguments" in favor of the change of plans but declined to disclose them. "I spoke to the Iranian deputy foreign minister," said Gharibjanian. "He said there are urgent issues and that they have to depart."

Gharibjanian also insisted that Ahmadinejad's visit was "very successful." "A lot of progress was made on serious [Armenian-Iranian] economic projects," he said.

Speaking at a joint news conference, Ahmadinejad said Iran remains committed to deepening ties with Armenia as it believes they are "very important" for the two nations and the region as a whole. "Fortunately, Armenian-Iranian relations are warm, strong and developing," he told professors and students at Yerevan State University later on Monday. "Relations that are based on friendship, justice and mutual respect."

Ahmadinejad stressed at the same time that Tehran and Yerevan are only "at the beginning of the road" and that their relationship has a "bright future." "I believe we should step up efforts to deepen our relations in the scientific, cultural and intellectual spheres and to develop our infrastructures," he said.

## Important Developments In The Fight For Armenian Genocide Recognition In The UK

LONDON -- Two important developments in the fight for Armenian Genocide recognition in the UK took place last week

Սկիզբը, երբ կը հետեւէինք յայտագրին, մտածեցինք, թէ ընդհանրապէս նորարարութեան ճամբուն քմահաճօրէն մոռցուած, կամ տակաւ մոռացութեան գիրկը տրուող անհատնում երգերու երկար ցանկով հանդէս եկած է ԳՈՀԱՐ: Վերականգնումի փո՞րձ մըն էր ըլլալիքը: Ոչ, այդ չէր: «ԳՈՀԱՐ» կ՚առաջադրէր յաւիտենականացնել ազգային ժողովրդական երգարուեստը:

«ԳՈՀԱՐ» յաջողած էր իր սրբազան առաքելութեան մէջ: Ան, մեր ժողովուրդի անցեալի գերազանցապէս ժողովրդական երգերը ներկայի պահանջքներուն պատշաճեցնելով, զանոնք վաղուան կը կամրջէր, Սինֆօնիք Նուագախումբ, երգչախումբ, մեներգ եւ ֆոլքլոր՝ համախումբ կատարողութեան դասական պատկերացմամբ կատարած յօրինումներով:

Այսուհետեւ մեր ժողովրդական երգերը պիտի դիմադրէին բոլոր ժամանակներու վերիվայրումներուն, պահելով իրենց ազգային բիւրեղեայ դիմագիծը միջազգայնօրէն ընդունուած դասական երաժշտութեան հողին վրայ: Անշուշտ, այս բոլորին ետին կանգնած է յօրինող եւ խմբավար Սեպուհ Աբգարեան: Անոր մատներուն արանքին կպած երաժշտական ցպիկը կը հրաշագործէ հայ երգը նոր արեւելումներով:

Կիպրոս ծնած այս փոքրակազմ, սպիտակահեռ բայց՝ վառվռուն, մշտաժպիտ եւ յաւերժ երիտասարդ, տաղանդաշատ խմբավարը, Սեպուհ Աբգարեան, իբրեւ օփերայի երգիչ, երգահան, ծանօթ անուն է Կիպրոսէն՝ Յունաստան, Լիբանանէն՝ Սուրիա, Եգիպտոս, Բարիզէն՝ Թոքիօ եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներ: Ան ներկայիս գեղարուեստական խմբավարն է «ԳՈՀԱՐ» Սինֆօնիք Նուագախումբին եւ երգչախումբին, որոնք աշխարհով մէկ կը տարածեն հայ երգն ու երաժշտութիւնը: «ԳՈՀԱՐ» Սինֆօնիք Նուագախումբի եւ Երգչախումբի ելոյթի աւարտին, բեմ հրաւիրուեցաւ Տիկ. Գոհար Խաչատուրեան, որուն անունը կը կրէ համանուն խումբը: Շնորհակալութեան եւ գնահատութեան ծաղկեփունջ յանձնուեցաւ անոր:

Հայ ժողովուրդը երախտապարտ պիտի մնայ «ԳՈՀԱՐ» Սինֆօնիք Նուագախումբի եւ Երգչախումբի մտայղացումն ու իրագործողը հանդիսացող հայ մշակոյթի երկրպագու Յարութիւն Խաչատուրեանին եւ իրեն օժանդակ հանդիսացող իր եղբայրներուն՝ Շահէին ու Նարին, որոնք ոչինչ կը խնայեն հայ մշակոյթի բարգաւաճման ու ծաւալման համար:

# ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

Շարունակուած էջ 8-էն

տասխանատու իր պաշտօններուն մէջ Խրիմեան մնաց ժողովուրդին իսկական Հայրիկը, մտահոգ իրենց ամենօրեայ հոգերով: Կը գրէր, կը բողոքէր, կը խրախուսէր, Կ. Պոլսոյ պատրիարքարան եւ Բարձր Դուռ հասցնելով իր տիրական ձայնը, մինչեւ անգամ անձնապէս Կարին երթալով ու նահանգապետին ներկայանալով, որպէսզի կարենար ջնջել տալ ժողովուրդին վրայ դրուած անհարկի տուրքերը: Ան նոյնպէս խարանեց հայ ժողովուրդի ներքին թշնամիները, վաշխառու հայ մեծահարուստներն ու խաւարամիտ եկեղեցականները: Անգամ մըն ալ Կ. Պոլիս երթալով պետական իշխանութեանց մօտ՝ պաշտպանելու համար հայոց արդար իրաւունքները:

Որպէս հետեւանք այս բոլորին Կ. Պոլսոյ Պատրիարքութեան Ազգային Կեդր. Վարչութիւնը 1868-ին եպիսկոպոսական վկայական յանձնեց Խրիմեան վարդապետի, որ տարի մը ետք, Գէորգ Դ Ամենայն Հայոց կաթողիկոսէն եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ: Նոյն տարին իսկ, 1869-ի Սեպտեմբեր 4-ին, Խրիմեան Եպիսկոպոս շուտով կը բարձրացնար Կ. Պոլսոյ փշոտ Աթոռին որպէս Պատրիարք, երբ 1863 թուականի Ազգային Սահմանադրութիւնը տակաւին փորձի շրջան մը կ՚անցնէր: Նոյն ընտրութեան օրը Խրիմեան Պատրիարք կ՚ըսէր. «Իմ վրաս Պոլսոյ Պատրիարքի պէս մի նայիք. Ես Հայաստանի ցաւոտ պատկերն եմ:» Չորս տարի ետք կը կարդար իր հրաժարականը Ազգ. Սահմանադրութեան շուրջ իր ունեցած տարակարծութեանց պատճառով, իր վերջին սա խօսքերով.

«Այսօր եւ յաւիտեան կը բողոքեմ զի Խրիմեան ի մօրէ Սահմանադրութենէն առաջ սահմանադրական ծնած է: Ես Սահմանադրութիւնը գրկել կ՚ուզեմ, բայց չեմ ուզեր զանի այնչափ ճնշել ու սեղմել, մինչեւ որ գրկիս մէջ մեռնի:»

Հրաժարեալ Պատրիարքը, որուն յաջորդեց Ներսէս Վարժապետեան, ազգը զինք հանգիստ չձգեց. զինք Պերլինի Վեհաժողովին ուղարկեցին որպէս պատգամաւոր, երբ 1877 թուի Ապրիլ ամսուն պայթեցաւ Ռուս-Թրքական պատերազմը, եւ հաշտութեան դաշնագիր կնքուեցաւ ի Նպաստ Ռուսիոյ Սան Սթեֆանոյի մէջ՝ 1878 Մարտ ամսուն, եւ շնորհիւ Խրիմեան եւ Վարժապետեան պատրիարքներու ճարտար հետապնդումներուն՝ Դաշնագրին 16-րդ յօդուածը յատկացուեցաւ հայերուն: Սակայն, ինչպէս գիտենք, Վեհաժողովի ընթացքին, ուր ներկայ պիտի ըլլար նաեւ Խրիմեան նախկին Պատրիարքն ու իրեն ընկերակից պատգամաւորներ՝ Խորէն Արք. Նարպէյ, Ստեփան Փափազեան եւ Մինաս Չերազ, յօդուածը շրջուեցաւ հակառակ ուղղութեամբ թիւ 61-ի: Հակառակ շռայլուած խոստումներու Հայ Պատուիրակութիւնը նոյնիսկ Վեհաժողովէն դուրս մնաց, որովհետեւ ժողովը կը հետապնդէր տնտեսական եւ քաղաքական շահեր միայն, եւ ոչ թէ տառապող ազգի մը արդար իրաւունքը: Կ. Պոլիս վերադարձին՝ Խրիմեան Հայրիկ արտասանեց իր համբաւաւոր ճառը, Հարիսայի երկաթեայ եւ թուղթէ շերեփի դասը տալով իր ազգին, ըսելով որ անոնք երկաթէ շերեփով կերան հարիսան, ու մենք թուղթէ շերեփով՝ անօթի մնացինք:

Այսուհանդերձ որպէս Կաթողիկոս Ամենայն Հայոց, Խրիմեան իսկական Հայրիկը եղաւ Ամերիկահայ Թեմին, որուն 110-ամեակը այսօր կը տօնեն միասնաբար Արեւելեան եւ Արեւմտեան Հայց. Եկեղեցւոյ զոյգ թեմերը: Երբ նախնական ամերիկահայութիւնը տակաւին Կ. Պոլսոյ պատրիարքութեան ենթակայ համայնք մըն էր Խորէն Աշըգեան պատրիարքի օրով, յաջորդ պատրիարքներէն Մաղաքիա Օրմանեան տեղեկագրեց Հայրիկին որ Ամերիկահայ նորակազմ գաղութը Կ. Պոլսէն անցնէր Մայր Աթոռի անմիջական իրաւասութեանը ներքեւ, իսկոյն առանձին թեմ մը դառնալով դարագլխսբէն առաջ նոյնիսկ:

Հայրիկ իր առաջին յորդորը ուղղելով 1895 Յունուար 8 թուականով,

«Ողջոյն ձեզ պանդուխտ որդիք հայոց, կ՚ըսէր, որ բախտն զձեզ հայրենի աշխարհէն վարել տարել է մինչեւ Ամերիկա: Ողջոյն ձեզ Արարատեան աշխարհէն, Մասեաց Նոյեան Տապանէն, Էջմիածնայ Սուրբ Տաճարէն:»

Շատ չանցած Խրիմեան Մկրտիչ Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս պաշ-տօնապէս կը հաստատէր Ամերիկեան Ցամաքամասի Հայաստանեայց Եկեղեցւոյ Թեմը իր 1898 Յուլիս 2 թուակիր սրբատառ կոնդակով, ուղղելով զայն «Հարազատ եւ Հայկազն որդւոցդ մերոց սիրելեաց, տարագիր զաւակացդ Մօրդ Լուսոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնիս՝ Ձեզ ամենեցուն որ բնակեալ կայք ի Նոր Աշխարհն յԱմերիկա:» Հայրիկը Հայոց, եպիսկոպոս կը ձեռնադրէր նախապէս հովիւի պաշտօնով Մէսէչիւսեց նահանգի Ուստըր քաղաքին մէջ յանուն Սուրբ Փրկչի առաջին հայ եկեղեցին կառուցողն ու օծումը կատարող Յովսէփ Ծ Վրդ Սարաճեանը, տալով անոր »լիազօր իշխանութիւն իւր առաջնորդական պաշտօնավարութեան մէջ:« Այս կերպ կը հաստատուէր Ամերիկեան ցամաքամասի, Հիւսիս եւ Հարաւ Ամերիկաներու միացեալ Հայ Եկեղեցւոյ Թեմը, առաջնորդութեամբ Յովսէփ Եպիսկոպոս Սարաճեանի, որուն յոբելինական 110-րդ տարին պիտի տօնախմբենք յառաջիկայ տարի:

Յանուն Ամերիկահայ զոյգ թեմերուն Յարգանք մշտնջենի Հայոց Հայրիկի խնկելի յիշատակին:


ՄԵԾԱՐԱՆՔԻ ՓԱՌԱՏՕՆ
ՆՈՒԻՐՈՒԱԾ ԻՐԱՆԱՀԱՅ ՄԵԾԱՆՈՒՆ ԵՐԳԻՉ
ԱՆԴՐԷ ՎԱԼԵԱՆԻ
ԾՆՆԴԵԱՆ 60-ԱՄԵԱԿԻՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ
ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ 45-ԱՄԵԱԿԻՆ
CELEBRATION NIGHT
DEDICATED TO THE
FAMOUS IRANIAN ARMENIAN SINGER
ANDRE VALIAN
ON HIS 60-th BIRTHDAY AND
45th ANNIVERSARY OF HIS
ARTISTIC LIFE
Կիրակի, Հոկտ. 28, 2007, երեկ. ժամը 7-ին,
SUNDAY, OCTOBER 28 , 2007, @ 7:00p.m.
Glendale High School-ի շքեղ սրահի մէջ
1440 E. Broadway, Glendale
Բացառիկ ելոյթներով իրենց մասնակցութիւնն են բերելու
գաղութիս նշանաւոր երգիչները
ANDY
ADISS
ASHOT
JOSEPH
HAROUT
SAKO
ALEN
HEROS
Նուագախմբի ղեկավար, երաժիշտ՝
ՀԵՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ
Տոմսերը վաճառվում են
CHATERIAN VIDEO 818-242-6928
PACIFIC VIDEO 818-956-6643
GLENOAKS VIDEO 818-242-9009
ANI GROCERY 818-241-7229
Տոմսերի արժէքը՝
$50, $40, $30, $20
Ձրի առաքման Համար զանգել
For Free Delivery Call
818.265.0506

# ԲԱԽՏԱՒՈՐ ՄԱՐԴԸ

*Շարունակուածէջ17-էն*

*րոպէները եւ իրեն հոգեպէս վերապրած տեսնում, «Հայաստան երկիր իմ դրախտավայր», ճիշտ են բնութագրել: Շատ չերկարացնեմ խօսքս, գնացել էինք Սեւանայ լիճը լողանալու եւ վայելելու այնտեղի զով օդը եւ բնութիւնը, երեկոնապահին երբ վերադառնում էինք Երեւան անզգուշութեան հետեւանքով խախտում թոյլ տուեցի արգելուած տեղից շուրջ դարձ կատարելով, մի միջահասակ միլիցիա մեքենան կանգնեցրեց, մեզ մօտենալով հարցրեց.*

*-Տուրիստներ է՞ք, որտեղի՞ց էք.*

*-Իրանահայեր ենք, եկել ենք մեր հայրենիքը ուխտի.*

*-Շատ լաւ էք արել, բարի էք եկել, յուսով ձեր ուխտը ընդունելի լինի, բոլորիդ լաւ եւ ուրախ անցնի, սակայն ինչպէս գիտէք, երթեւեկութեան օրէնքները եւ նշանները ամէն տեղ նոյնն են, անծանօթի հարց չպիտի լինի, այստեղ արգելուած տեղում շուրջ դարձ կատարեցիք, քանի որ դուք կարօտի զգացումով եւ փափագով էք հայրենիք այցի եկել, ներում եմ ձեզ, ջանացէք օրէնքները յարգել ձեր ապահովութեան համար, համեցէք, ուրախ վայելում:*

*Այսպէս հայ միլիցիան իր այդ բարեկիրթ վարմունքով այնպիսի դրական ազդեցութիւն թողեց մեր վրայ, որ մեր կեցութեան օրերին դարձանք ուշադիր եւ բծախնդիր յանկարծ խախտում չկատարենք:*

*Արմէնը հետաքրքրութեամբ լսեց Անդրէի պատմած-տպաւորութիւնը, ապա շարունակեց իր կիսատ մնացած պատմութիւնը.*

*-Աֆիսէրը շիտակ է, որ թոյլ տուեց Ջէյմզը գնալ, սակայն կասկածանքը չփարատուեց, չկորցրեց զգուշութիւնը, նա հետախուզելու պահանջ զգաց եւ հետեւեց Ջէյմզի մեքենային, տեսնի որքանով նա ճշմարիտ է:*

*-Ջէյմզը անվրդով շարունակում է ճամբան, սակայն մէկէն հայլուց նկատում է աֆիսէրը հետեւում է իրեն, անմիջապէս ձեռքի հեռախօսով ժամադրութիւնը ընկերոջ հետ յետաձգում է եւ որոշում է գնալ դէպի գերեզմանատուն եւ շարունակում է 134 երթուղին: Ջէյմզի տրամադրութիւնը փոխւում է, մտածմունքի մէջ է ընկնում ինքը իրեն փնթփնթալով.*

*-Եթէ եկանք ու թաղում չեղաւ, ինչ եմ անելու, վստահ եմ կրկնապատիկը կը տուգանուեմ եւ կը խայտառակուեմ: Ա՛խր, ինչո՞ւ այսպէս արեցի, ինչո՞ւ սուտ ասացի, երբ էիր դու ստել յիմա՛ր, ինչո՞ւ ինչո՞ւ: Ա՛խր, եղա՞ւ, մարդս իր համար ցաւ կը ստեղծի, առածն ասում է՝ գլուխը որ չի ցաւում թաշկինակ չեն կապի, տօ՛, տնաշէն դրամը տայիր եւ քեզ ազատէիր, ի՞նչ անեմ, ոչ ճար ունեմ, ոչ՝ ճամբայ, հէնց էսպէս ունի յետեւից գալիս է, երանի ընդունել էի եւ փրկուել էի այս տարտարոսից: Ո՞ւմ խնդրեմ, Ո՞ւմ աղաչեմ, երբ ես տեսել խաբեբայ մարդուն Աստուած օգնի: Տէր Աստուած խոստովանում եմ իմ մեղքս, զղջում եմ արածիս համար, խոստանում եմ երբեք չստեմ, որ այսպիսի տառապանքի մէջ չընկնեմ:*

*Նա այսպէս մղձաւանջային հոգեկան վիճակում յանկարծակի սթափուեց եւ ինչ տեսնի, հասել է՝ Forest Lawn- ի դռան առջեւը, ջանաց իրեն կարգի բերել, սակայն առաւել մտատանջութիւնը պատեց իրեն, չէր իմանում ինչ անի, նայեց ետեւ, տեսաւ միլիցիան մի քիչ հեռաւորութեան վրայ կանգնած է, իրեն քաջութիւն ներշնչեց, մտապէս կենտրոնացաւ, ապա մօտեցաւ տեղեկատուութեան պատուհանին հարց տալով.*

*-Այս ժամին թաղում ունէ՞ք այստեղ.*

*-Այո՛, թաղում կայ, ո՞ւմ անունով կը հարցնէք.*

*Ջէյմզը այդ քանը լսելով սրտապնդուեց:*

*-Անունը միտս չէ, ինչպէս գնամ, գտնեմ.*

*-Տեսութիւնը կատարւում է կարմիր եկեղեցում, այսպէս ուղիղ կը գնաս, կը թեքուես ձախ.*

*-Յոյժ շնորհակալ եմ ձեր տուած տեղեկութիւնների համար:*

*Ջէյմզի տրամադրութիւնը բոլորովին փոխուած ուրախ նստեց մեքենան եւ քշեց դէպի Կարմիր եկեղեցին, տեսաւ միլիցիան էլ յետեւից գալիս է: Նա այլեւս վախ չէր զգում իր սրտում, մեքենան կանգնեցրեց եւ մտաւ եկեղեցի, անունը արձանագրեց տետրակում եւ առաջացաւ դէպի բեմը եւ նստեց թուով մի քանի հոգի յուղարկաւորների մօտ:*

*Միլիցիան այլեւս անելիք չունէր, նա թողեց եւ հեռացաւ:*

*Ջէյմզը արարողութեան աւարտին նաեւ թողեց գերեզմանատունը, նա անհանգիստ էր այդ սուտի համար, որպէսզի մեղքից սրբուի հոգին, որոշում է 500 դոլլար նուիրել որեւէ բարեսիրական կազմակերպութեան եւ հեռու մնալ կեղծիքից ու ստից:*

*Այս դէպքից անցնում է մի քանի ամիսներ, Ջէյմզին տեղեկացնում են՝ դատարան դիմի:*

*Ջէյմզը կասկածանքի մէջ է ընկնում մտքի մէջ ենթադրութիւններ անելով.*

*-Չլինի որեւէ անգիտակցաբար գործուած յանցանքի համար են դատարան հրաւիրել:*

*Այսպէս մտամոլոր վիճակում որոշում է անյապաղ ճիշտ ժամին ներկայ գտնուել:*

*Դատաւորը մի քանի հոգիների անունները, որոնց մէջ էր նաեւ Ջէյմզի անունը կարդաց եւ բացատրութիւն տուեց.*

*-Դուք բախտաւոր մարդիկ էք, դուք ձեր ցուցաբերած յարգանքի համար պրն. Pierre-ի թաղման-յուղարկաւորութեան ժամանակ արժանացել էք դրամական մեծ պարգեւի: Հանգուցեալը կտակ էր արել՝ ովքեր իմ թաղմանը մասնակցում եւ իրենց անունը յուշամատեանում արձանագրած են լինում՝ իւրաքանչիւրին 250,000 դոլլար իմ ունեցուածքից նուիրել:*

*Ջէյմզը ապշած մնում է տեղում, ուշքի գալով անսպասելի դէպքից եզրակացնում է.*

*-Էս ինչ բախտ է վիճակւում ինձ, ոչ այն հոգեկան ծանր տառապանքը, ոչ էլ այս կեղծ բախտաւորութիւնը, ինչին վերագրել սա՝ ճակատագրի՞ն, պատահականութեա՞ն, բարի ոգիների՞ն, թէ գերբնական ուժերի՞ն, իմ մտքի ունակութիւնից վեր բաներ են սրանք, ես պիտի շնորհակալ լինեմ միլիցայից, նա էր որ իմ քայլերը ուղղեց դէպի գերեզմանատուն եւ արժանի դարձրեց այս նիւթական պարգեւին:*

*Այս պատմութիւնը շատ խորհելու եւ մտորելու տեղիք է տալիս:*






*Տեսնել էջ 21*

# «ԿԼԱՆԸ ՊԱՏՐԱՍՏԻՈՒՄ Է ՓԱԽՈՒՍՏԻ»

*Շարունակուած էջ 5-էն*

*բարի, որ առաջադրուելու է: Աւելի շուտ, Լեւոն Տէր-Պետրոսեանը կ՚առաջադրուի ժողովրդի կամքով:*

- Հանրութեան մէջ եւ նաեւ քաղաքական գործիչների շրջանում մի հատուած կայ, ովքեր ասում են, թէ կողմ են Լեւոն Տէր-Պետրոսեանին, սակայն չեն ցանկանում նրա կողքին տեսնել հին ուժերին:

*- Դեռ Լեւոն Տէր-Պետրոսեանը չի առաջադրուել, իշխանութիւններն արդէն միացրել են վարկաբեկման մեքենան: Փորձում են վարկաբեկել: Բայց ժողովուրդը գիտի մի պարզ ճշմարտութիւն. նոյնիսկ տարածաշրջանում չկայ այն մարդը, որ սրանցից աւելի վարկաբեկուած լինի: Փորձ է արւում ժողովրդին վախեցնել հին դէմքերով: Իմ կարծիքով, Լեւոն Տէր-Պետրոսեանը կը գայ լրիւ նոր թիմով, քանի որ պէտք է լուծում տա երկրի առաջ ծառացած բազում հարցերի: Աւելի կոնկրետ, այստեղ դրուած է լինել-չլինելու հարցը: Սրանք խաղասեղանի վրայ են դրել ազգային անվտանգութեան խնդիրը, որի լուծումը շատ բարդ է լինելու, իմ կարծիքով՝ հնարաւոր է նոր թիմով, նոր ուժերով:*

- Բայց հեռուստաէկրաններից շատ են խօսում «մութ ու ցուրտ» տարիների մասին:

*- Այդ չիմարութեանը բազմիցս պատասխանել եմ: Լեւոն Տէր-Պետրոսեանն ընդունել է Հայաստանը երկրաշարժից աւերուած հիւսիսով, պատերազմից քայքայուած հարաւով եւ հանրապետութեան կենտրոնում այս ամէնի հետ միասին խնդիր ունէր կերակրելու աւելի քան 500 հազար փախստականների: Նրա նախագահութեան առաջին տարիներին պատերազմը, երկրաշարժը, փախստականները եւ վերջապէս՝ իմպերիայի փլուզումից յետոյ անկլաւային վիճակը երկիրը կանգնեցրել էին կործանման եզրին: Լեւոն Տէր-Պետրոսեանին յաջողուեց ոչ միայն դուրս գալ այս վիճակից, այլ նաեւ ստեղծուեցին նոր պետութեան կառավարման ինստիտուտները, անկախ Հայաստանն ուղղեց ողնաշարը եւ ոտքի կանգնեց: Եւ այս ամէնի հետ միասին ստեղծուեց բանակը, որը դարձաւ լաւագոյնը տարածաշրջանում: 1998-ին երկիրն արդէն չունէր վերոյիշեալ պրոբլեմները: Եւ բոլորս տեսանք, թէ ինչով այս ամէնը եզրափակեց ղարաբաղեան կլանը: Նրանք գնացին մէկ ճանապարհով՝ հնարաւորինս թալանել, կողոպտել ժողովրդին:*

- Բայց ժողովրդի մի հատուած կայ, որն ասում է, թէ նախկիններն էլ են թալանել:

*- Ժողովրդի այդ հատուածին կը խնդրէի, որպէսզի նրանք միլիոնատէրերի երեք անուն հնչեցնեն, որոնց ունեցուածքը դիզուել է թալանի արդիւնքում: Դրա փոխարէն յոռետեսներին կ՚առաջարկէի խօսել Կոնդի, Կոզեռնի, Ֆիրդուսի, Հիւսիսային պողոտայի թալանուած բնակիչների հետ, որպէսզի նրանք ուշադրութիւն դարձնեն, թէ պետական կարեւորագոյն կառավարման մարմիններում ովքեր են նստած եւ ինչ սեփականութիւն ունեն նոյն Հիւսիսային պողոտայում երեւանցիների հաշուին, որպէսզի նրանք յիշեն Կոնեակի գործարանի, «ԱրմենՏելի», ոսկու, մոլիբդենի, «Արմենիա» հիւրանոցի, «Ջուարթնոց» օդանաւակայանի, ընդերքի խայտառակ գործարքները, որոնց վրայ կարող եմ կանգնել ամենափոքր մանրամասներով: Բերեմ միայն երկու օրինակ: Ոսկու 4 գործարանների լիցենզիաները վաճառուեցին 20 տարով ընդամէնը 1 միլիոն 750 հազար դոլարով: Եւ թող հետաքրքրուեն, թէ մինչեւ այսօր ոսկու հանոյթից քանի՞ ցենտ է մտել պետբիւջէ: «Արմաւիայի» 36 չուերթների լիցենզիաները կոպեկներով վաճառուեց ղարաբաղեան կլանի կարկառուն ներկայացուցչին՝ Միկա Բաղդասարովին: Հաշուէք, քանի՞ ցենտ է մուծել պետբիւջէ՝ նուէր ստանալով միլիոնաւոր դոլարներ: Այս երկրագնդի վրայ չկայ մի երկիր, որը երկրի ոսկին կը վաճառի փունտի դիմաց: Բայց սա առանձին խօսակցութիւն է, որի մասին մի օր կը խօսէք: Նմանատիպ գործարքներով թալանուեց հայ ժողովուրդը:*

- Ասում են, որ Լեւոն Տէր-Պետրոսեանի իշխանութեան տարիներին թալանուեցին մեր բազմաթիւ գործարանները:

*- Փլուզուել էր հսկայական մի իմպերիա՝ ԽՍՀՄ-ը: Վերոյիշեալ գործարանները՝ իրենց յարակից գիտական կենտրոններով, ֆինանսաւորւում էին ԽՍՀՄ բիւջէից, որը տարեկան հասնում էր 9 միլիարդ ռուբլու, որն այն ժամանակ համարժէք էր 13-14 միլիարդ դոլարի: Միանգամից կտրուեց ֆինանսաւորումը, պատերազմի, շրջափակման պայմաններում երկիրը խորը էներգետիկ ճգնաժամի մէջ էր գտնւում: Բնական էր ֆինանսաւորումից զրկուած գործարանների փլուզումը: Հումքը պէտք է կրէինք ինքնաթիռներով, հասարակ երկաթը կը դառնար ոսկու արժէքի: Պատրաստի արտադրանքը պէտք է արտահանէինք նորից ինքնաթիռով, որն ուղղակի ծիծաղելի էր: Ես կարող եմ այս ամէնը շարունակել, բայց դա առանձին մեծ խօսակցութեան նիւթ է: Յոռետեսներին ցանկանում եմ, որպէսզի ուշադրութիւն դարձնեն մի շատ խօսուն եւ պարզ իրողութեան վրայ. տասը տարուց աւելի է՝ մեր երկիրը պատերազմական գործողութիւնների մէջ չէ: Ո՞վ եւ ի՞նչ մեթոտներով խանգարեց վերականգնել «քանդուած» գործարաններից գոնէ երկուսը: Չէ՞ որ խաղաղութեան պայմաններում ղարաբաղեան կլանը կարող էր դա անել: Ինչո՞ւ չարեցին: Շատ պարզ է՝ ինչու: Որպէսզի Հայաստանը հայաթափուի: Մեր զաւակները, որոնք կազմում են ազգի շուրջ 40 տոկոսը, այսօր օտար ափերում իրենց կեանքի հաշուին գումարներ են աշխատում, որպէսզի պահեն իրենց բարեկամներին եւ հարազատներին ՀՀ-ում: Կլանն այստեղից էլ է օգտւում՝ գրպանելով ամէն մէկ դոլարի շուրջ 30 տոկոսը: Յայտնի է, որ միայն 9 ամիսների ընթացքում, իրենց իսկ տուեալներով, Հայաստան է ուղարկուել 1,2 միլիարդ դոլար: Օր օրի արժեզրկւում են դոլարը: Դրամի արժեւորման պայմաններում ապրանքները թանկանում են, ինչը պէտք է լինէր ճիշդ հակառակը:*

- Այդ դէպքում, ինչո՞ւ են ապրանքները թանկանում:

*- Որովհետեւ մենք կապիտալիզմ չենք կառուցում: Մեր կառուցածը շան որդու երկիր է:*

*ԼՈՒՍԻՆԷ ԲԱՐՍԵՂԵԱՆ*

# ՀԵՌԱՒՈՐ ԱՍՏՂԻ ԼՈՅՍԸ

*Շարունակուած էջ 6-էն*

*Այսպէս էլ ապրում ենք:*

*Հիմա առաջին նախագահի թուացեալ կամաւոր հրաժարականից յետոյ, տաս տարի անց, երբ խորանում ես նրա գործերի մանրամասներում, տեսնում ես բազում սխալներ եւ ճակատագրական որոշումներ: Առաջին նախագահը եւ իր թիմը չկարողացան կանգնել շահամոլ կաստայի նկրտումների առաջ: Չկարողացան արիւնով ստեղծուած յաղթանակը զերծ պահել չինովնիկական երկերեսանութիւնից, խժռելու, հարստանալու մոլուցքից, ինչը արժանացաւ ժողովրդի բուռն դժգոհութեանը: Առաջին նախագահը եւ իր թիմը չկարողացան փակել դարպասներ փողով ստտծով ապրած խուժանի առաջ, ազնիւ գաղափարները ոչնչացնող, կեանքը փողի երջանկութեան մէջ տեսնող աւազակների առաջ:*

*Դրա հետ միասին Լեւոն Տէր Պետրոսանի եւ իր թիմի հրաժարականը բողոք էր, բողոք էր հենց մեր դէմ, որ վատ ենք փակում դարպասները, որ օգնում ենք կոռուպցիային ու նենգամտութեանը: Որ նայում ենք մեր տանը օտարի աչքերով: Նախագահին գնալը պարտադրուած էր ներքին ու արտաքին ուժերի կողմից: Պարտադրուած էր, որովհետեւ միայն նա՝ Լեւոն Տէր Պետրոսեանը կտրուկ ու վիրաբուժական քայլերի խիզախութիւն ունէր: Այդ էր պատճառը, որ զգալով դաշնակցական որոշ գործիչների ոչ մաքուր քայլերը, նա գնաց ծայրայեղ քայլերի՝ Հայաստանում լուծարեց դաշնակցական կուսակցութեան գործունէութիւնը, պատասխանատուութեան կանչեց ազգայնամոլ մի շարք մարդկանց, որոնք շեղւում էին Սահմանադրութեան ոգուց ու տառից: Ոչ, դա փափուկ, կիրթ ու մեղմ խօսող նախագահը չէր: Դա ժողովրդի ու երկրի շահերի գլխաւոր հրամանատարան էր, որի համար թանկ էր արիւնով ձեռք բերուած արդարութիւնը:*

*Լեւոն Տէր Պետրոսեանը դարձաւ քաղաքական երեւելի գործիչ: Բայց առաջին հերթին նա մտաւորական էր, գրականութեան ու արուեստի մարդ: Դրա համար 1994ին ԱՄՆ-ի 200 հայ արուեստագէտներ «Բրաւօ Հայաստան» էին վանկարկում, փաստելով մեր ոգին, մեր ուժը, մեր մշակոյթը: (Իսկ Երեւանում լոյս չկար):*

*Մովսէ Խորենացու ու Եղիշէ Չարենցի տօնահանդէսները ժողովրդական ուրախութիւններ էին, իսկ բարեկամ երկրների թիւն անընդհատ աճ էր տալիս՝ Միացեալ Նահանգներից սկսած մինչեւ Չինաստան:*

*Մենք սկսեցինք յարգել մեզ, գնահատել մեր լեզուն, մեր խօսքը, մեր մշակոյթն ու արուեստը: Եւ ամենակարեւորը, ամենամեծ յեղափոխութիւնը տեղի ունեցաւ մեր ուղեղներում՝ մենք սկսեցինք ինքնուրոյն մտածել եւ ինքնուրոյն արարել:*

*Հիմա Հայաստանում լոյս կայ: Երգիչ-երգչուհիները երգում են ֆաներայի տակ եւ փողեր կորզում պատուիրատուներից: Կեանքը դարձել է շօ՝ կեր, խմիր պարի ու դիզի: Ինչքան շուտ ենք վատ օրինակները սեփականացնում: Հիմա Երեւանում բազմաթիւ շէնքերի անտառ է, կաֆէների, ռեստորանների, գեղեցկութեան սրահների բազմազանութիւն: Հիմա հայի չես զարմացնի արտասահմանեան շօյերի տեխնիկական փայլով, թանկարժէք աւտոմեքենաներով ու զգեստներով: Մրցութիւն է, ինչպէս ամէնուր:*

*Կրակոցներ, սպանութիւններ, դաւեր՝ սրանք աւելացել են: Եւ բոմժեր՝ փողոցներում, աղբարկղներում, մայթերին: Հիմա հայ Բազազ Ատեմները մեքենաների ու թանկարժէք քարերի հաւաքածուներ ունեն, ղեկավարների ու ամառանոցների ընտրանի:*

*Ժամանակը գնում է դէպի վեր, ամենամեծ բարձունք, որտեղից, ինչպէս գիտէք, հեշտ է գահավիժել: Հիմա Երեւանում լոյսերի հրավառութիւն եւ ամէն երեկոյ, օդ են ցայտում գունագեղ փայլեր:*

*Բայց արդեօ՞ք այդպէս է...*

*Այս ամէնը Երեւանի արտաքին կերպարն է: Իսկ ներքինը ամէնօրեայ, հանապազօրեայ հացն է, որ շատ-շատերը տառապանքով են վաստակում: Բայց տառապանքով ապրողներն աւելի երջանիկ են: Նրանց մէջ դեռ մնացել է հաւատը արդարութեան նկատմամբ: Իսկ ով շատ ունի, հոգին թուղթ է դարձել: Աստուած չանի մի կայծ բոցկլրտայ... Այդ թանկարժէք թղթերը մոխիր կը դառնան: Բայց սա արդէն ուրիշ պատմութիւն է:*

*Իրականը մենք ենք, Շուշիի ազատագրումը, գինադադարը եւ Եռաբլուրը: Յաղթանակ եւ յիշողութիւն: Վերջինը չի հերիքում մեզ: Ինչպէս չի հերիքում սթափ կեցուածքը եւ ճիշտ կողնորոշումը: Կեանքը ինչքան էլ միակն է ու անփոխարինելի, սակայն մաքրութեան կշեռք ունի: Եւ մենք, 21րդ դար թեւակոխածներս, պէտք է այդ կշեռքի նժարին ճիշտ կանգնենք: Ամէն ինչ ունայն է, ինչպէս խնձորի ծաղկին նստած ամպը, կ՚ասէր Եսենինը: Չթողնենք, որ ամպոտ մնայ մեր պատիւը: Աշխարհի ոչ մի սուպերմարկետում պատիւ չեն վաճառում: Ուրեմն մի հանէք փողի քսակը: Ապրանքի սով է:*

*****

*Հայաստանի առաջին ազգընտիր նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանը անցեալ տարի տօնեց իր ծննդեան առաջին 60-ամեակը: Գրախանութներում յայտնուած նրա հեղինակած երեք հատորները գիտնականի խոր պրպտումների տաղանդաւոր բացայայտումներ են, որ դարերի փաստը պէտքական է դառնում այսօրուայ զանգակատնի:*

*Այդ հատորներց մէկը դա մօտ տասը տարուայ քաղաքական հայրենասիրական կեանք է, զարմանալի հեքիաթային պատմուճանով շաղախուած, ուր խորը հասուն գործիչը բացւում է նոր երանգներով եւ արածի սթափութեամբ:*

*Ինձ թւում է նրա կեանքը այսօր նման է քարայրում փակուած Մհերին: Նա պիտի պատռի ժայռերը, պիտի դուրս գայ: Նրան դեռ հաւատում են:*

*Լեւոն Տէր Պետրոսեանը վաղուց վառել է իր աստղը մեր նորագոյն պատմութեան երկնակամարում: Թող որ այսօր հեռաւոր աստղի լոյս է ցոլում նրա ապրած տարիների մագաղաթներից, բայց հաւատացէք՝ դա իրական աստղի մաքուր լոյս է, որ այնպէս հարկաւոր է մեզ բոլորիս:*

*Ցատկապէս այսօր:*

*Հաւատս ո՞նց ծախեմ:*

ՄԱՐԶԱԿԱՆ

## ՅԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

*Հայաստանի ֆութպոլի առաջնութեան 25-րդ հանգրուանններու մրցումներուն արդիւնքները*

| | |
|---|---|
| *Շիրակ - Գանձասար* | *2-1* |
| *Կիլիկիա - Ուլիս* | *1-2* |

*Խումբերու դասաւորումը*

| | Խաղ | Յաղթ. | Հաւս. | Պարտ. | Կոլ | Միաւոր |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Արարատ | 24 | 15 | 3 | 6 | 45-32 | 48 |
| 2. Փիւնիկ | 23 | 15 | 2 | 6 | 51-19 | 47 |
| 3. Բանանց | 24 | 14 | 4 | 6 | 46-22 | 46 |
| 4. Միկա | 23 | 11 | 7 | 5 | 38-22 | 40 |
| 5. Գանձասար | 25 | 10 | 5 | 10 | 32-28 | 35 |
| 6. Շիրակ | 25 | 7 | 7 | 11 | 22-35 | 28 |
| 7. Ուլիս | 25 | 7 | 4 | 14 | 18-44 | 25 |
| 8. Կիլիկիա | 25 | 1 | 2 | 22 | 9-59 | 5 |

### ԲՌՆՑՔԱՄԱՐՏ
## ՎԻԳ ՏԱՐՉԻՆԵԱՆԸ ԿՐԿԻՆ ԼԱՒԱԳՈՅՆՆ Է ԱՇԽԱՐՅՈՒՄ



*Շաբաթ երեկոյան Սիտնիում հայազգի բռնցքամարտիկ Վախթանք (Վիք) Տարչինեանը 12-րդ ռաունտում տեխնիկական նոքաուտով յաղթանակ տարաւ ֆիլիփինցի Ֆեդերիկօ Կատուբեյի նկատմամբ՝ նուաճելով IBO վարկածով առաջին թեթեւ քաշային կարգում թափուր մնացած աշխարհի չեմպիոնի, ինչպէս նաեւ IBF վարկածով Asian Pacific-ի (Ասիական եւ Խաղաղօվկիանոսեան գօտու) չեմպիոնի կոչումը:*

*»Ազատութիւն« ռադիոկայանի հետ զրոյցում Վախթանք Տարչինեանը նշեց, որ գոհ է անցկացրած մենամարտից: »Կարծում եմ, լաւ մենամարտ ստացուեց: Մրցակիցս ուժեղ էր եւ արժանի չեմպիոնական մենամարտ անցկացնելու: Զէի ցանկանում շտապել եւ կրկնել նախորդ մենամարտի սխալները«, - ասաց բռնցքամարտիկը:*

*Վախթանքը նշեց, որ ամբողջ մենամարտի ընթացքում զգացել է հազարաւոր երկրպագուների աջակցութիւնը: Առաջին անգամ նրան »երկրպագում էր« որդին՝ Դաւիթը, ով արդէն 3 ամսական է: Մարզադահլիճում էր նաեւ անուանի ծանրորդ Եուրի Սարգսեանը:*

*IBF վարկածով Asian Pacific-ի չեմպիոնի կոչումը Վախթանքին թոյլ է տալիս ձեռնոց նետել նոյն վարկածով աշխարհի չեմպիոնին: Չի բացառւում, որ Տարչինեանի յաջորդ մրցակիցը դառնայ աշխարհի չեմպիոն Դմիտրի Կիրիլովը:*

*Վախթանք Տարչինեանն ասաց, որ իր նպատակն է ռեւանշ-մենամարտ անցկացնել ֆիլիփինցի Նոնիտո Դոների հետ, ում ամիսներ առաջ պարտուեց եւ կորցրեց IBO եւ IBF վարկածներով թեթեւ քաշային կարգում չեմպիոնական գօտիները: Նա պատրաստ է եւս մէկ անգամ փոխել քաշային կարգը՝ միայն թէ հանդիպի Դոներին:*

*Պրոֆեսիոնալ ռինգում Վախթանք Տարչինեանն անցկացրել է 30 մենամարտ, տօնել 29 յաղթանակ, որոնցից 23-ը՝ նոքաուտով: յաջորդ անգամ, ամենայն հաւանականութեամբ, նա ռինգ դուրս կու գայ դեկտեմբերի 1-ին ԱՄՆ-ում՝ փորձելով եւս մէկ չեմպիոնական գօտի նուաճել:*

### ԹԵՆԻՍ
## ԴԱՒԻԹ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԸ՝ «ՄԱՏՐԻՏ ՄԱՍԹԵՐՍ»-Ի ՅԱՂԹՈՂ




*«Մատրիտ Մասթերս» մրցաշարքը աւարտուեց արգենտինահայ թենիսիստ Դաւիթ Նալպանտեանի յաղթանակով: Նա եզրափակիչում 1:6, 6:3, 6:3 հաշւով պարտութեան մատնեց աշխարհի թիւ մէկ ռակետ շվեյցարացի Ռոժէ Ֆեդերերին:*

*Նալպանտեանը դարձաւ երրորդ թենիսիստը, ում յաջողուել է մէկ մրցաշարում պարտութեան մատնել աշխարհի երեք ուժեղագոյն թենիսիստներին. քառորդ եզրափակիչում Նալպանտեանը պարտութեան էր մատնել թիւ երկու ռակետ Ռաֆայել Նադալին, իսկ կիսաեզրափակիչում՝ թիւ երեք ռակետ Նովակ Ջոկովիչին:*

*Մասնագէտները նշում են, որ այս յաջողութիւնն ամենամեծն է Նալպանտեանի մարզական կարիերայում: Նախկինում նա յաղթել էր ATP-ի եւս հինգ մրցաշարերում, սակայն «Մատրիտ Մասթերս»-ը դրանցից ամենահեղինակաւորն է:*

*Մինչ այս յաղթանակը մրցաշրջանն անհաջող էր Նալպանտեանի համար: Վերջին 10 ամիսների ընթացքում նա միայն մեկ անգամ էր կարողացել ընդգրկվել ATP-ի մրցաշարերի լավագույն ութնյակում՝ բարսելոնյան մրցաշարի քառորդ եզրափակիչում զիջելով Դաւիթ Ֆեռերին:*

*Մատրիտեան մրցաշարում յաղթելու համար Նալպանտեանը վաստակեց 100 ռեյտինգային միավոր եւ դասակարգման աղյուսակում 33-րդ տեղից տեղափոխվեց 22-րդը:*

*Աշխարհի ուժեղագույն թենիսիստների դասակարգման աղյուսակը շարունակում է գլխավորել Ռոժէ Ֆեդերերը:*

# ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

## ԱՆԳԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆութպոլի առաջնութեան 10-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Էվըրթըն - Լիվըրփուլ | 1-2 | Մանչեսթըր Ս. - Պըրմինկհէմ | 1-0 |
| Ուիկան Աթլ. - - Փորթսմութ | 0-2 | Արսենալ - Պոլթըն | 2-0 |
| Ֆուլհամ - Տերպի Քաունթի | 0-0 | Ասթոն Վիլլա - Մանչեսթըր Եուն. | 1-4 |
| Պլէքպըրն - Ռիտինկ | 4-2 | Ուէսթ Յամ - Սանտըրլէնտ | 3-1 |
| Միտըլզպորօ - Չելսի | 0-2 | Նիւքէսըլ - Թոթենհամ | 3-1 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Արսենալ | 9 | 8 | 1 | 0 | 21-6 | 25 |
| Մանչեսթըր Եուն. | 10 | 7 | 2 | 1 | 15-3 | 23 |
| Մանչեսթըր Սիթի | 10 | 7 | 1 | 2 | 15-7 | 22 |
| Լիվըրփուլ | 9 | 5 | 4 | 0 | 16-5 | 19 |
| Փորթսմութ | 10 | 5 | 3 | 2 | 19-12 | 18 |
| Պլէքպըրն | 9 | 5 | 3 | 1 | 13-8 | 18 |
| Չելսի | 10 | 5 | 3 | 2 | 10-8 | 18 |

## ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Գերմանիոյ ֆութպոլի առաջնութեան 10-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Քոթպիւս - Տուիզպուրկ | 1-2 | Վարտըր Պրէյմըն - Յերթա Պերլին | 3-2 |
| Նիւրեմպըրկ - Այնթ. Ֆրանքֆորթ | 5-1 | ՎՖԼ Պոխում - Պ. Միւնիխ | 1-2 |
| Ռոսթոք - Շալքէ-04 | 1-1 | Քարլսրուհէ - Արմ. Պիլըֆէլտ | 0-0 |
| Պ. Լիվըրքուզըն - Տորթմունտ | 2-2 | Յանովըր-96 - Վոլսպուրկ | 2-2 |
| Յամպուրկ - Շթութկարթ | 4-1 | | |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Պայերն Միւնիխ | 10 | 8 | 2 | 0 | 27-4 | 26 |
| Վարտըր Պրէյմըն | 10 | 6 | 2 | 2 | 24-16 | 20 |
| Յամպուրկ | 10 | 6 | 2 | 2 | 16-8 | 20 |
| Քարլսրուհէ | 10 | 6 | 1 | 3 | 13-11 | 19 |
| Շալքէ-04 | 10 | 4 | 5 | 1 | 16-9 | 17 |
| Յանովըր-96 | 10 | 5 | 2 | 3 | 15-15 | 17 |
| Պ. Լիվըրքուզըն | 10 | 4 | 3 | 3 | 14-8 | 15 |

## ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Իտալիայի ֆութպոլի առաջնութեան 8-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Էս. Ռոմա - Նափոլի | 4-4 | Ուտինեզէ - Փալերմօ | 1-1 |
| Ռեճինա - Ինթէր Միլան | 0-1 | Ա. Սէ. Միլան - Էմփոլի | 0-1 |
| Լիվորնօ - Լացիօ | 0-1 | Ֆիորենթինա - Սիենա | 3-0 |
| Քալիարի - Քաթանիա | 1-1 | Աթալանթա - Թորինօ | 2-2 |
| Սամտորիա - Փարմա | 3-0 | Եուվենթուս - Ճենովա | 1-0 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ինթէր Միլան | 8 | 6 | 2 | 0 | 17-5 | 20 |
| Եուվենթուս | 8 | 5 | 2 | 1 | 17-7 | 17 |
| Ֆիորենթինա | 8 | 4 | 4 | 0 | 16-7 | 16 |
| Ա. Էս. Ռոմա | 8 | 4 | 3 | 1 | 19-12 | 15 |
| Ճենովա | 8 | 3 | 3 | 2 | 8-8 | 12 |
| Փալերմօ | 8 | 3 | 3 | 2 | 11-11 | 12 |
| Նափոլի | 8 | 3 | 2 | 3 | 14-10 | 11 |

## ՍՊԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Սպանիայի ֆութպոլի առաջնութեան 8-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Էսփանիոլ - Ռէալ Մատրիտ | 2-1 | Ռէալ Պաթիս - Ռասինկ | 1-1 |
| Լեվանթէ - Սեւիլլա | 0-2 | Վիլզարէալ - Պարսելոնա | 3-1 |
| Կեթաֆէ - Ռէալ Մուրսիա | 2-0 | Ռէալ Վայատոլիտ - Աթլեթ. Պիլպաօ | 1-2 |
| Յուէլվա - Մայորքա | 0-2 | Ալմերիա - Օսասունա | 2-0 |
| Աթլեթ. Մատրիտ - Սարակոսա | 4-0 | Տեփ. Քորունա - Վալենսիա | 2-4 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ռէալ Մատրիտ | 8 | 6 | 1 | 1 | 17-5 | 19 |
| Վիլզարէալ | 8 | 6 | 0 | 2 | 14-9 | 18 |
| Վալենսիա | 8 | 6 | 0 | 2 | 14-11 | 18 |
| Պարսելոնա | 8 | 5 | 2 | 1 | 17-7 | 17 |
| Էսփանիոլ | 8 | 5 | 1 | 2 | 12-9 | 16 |
| Աթլեթ. Մատրիտ | 8 | 4 | 2 | 2 | 15-7 | 14 |
| Մայորքա | 8 | 4 | 2 | 2 | 15-10 | 14 |

## ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ֆութպոլի առաջնութեան 11-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Վալանսիէ - Փարիզ Սէն Ժերմէն | 0-0 | Ռընէ - Լը Մանս | 3-0 |
| Քան - Լիյլ | 1-0 | Լիոն - Մոնաքօ | 3-1 |
| Թուլուզ - Սէնթ Էթիէն | 0-2 | Նանսի - Սոշօ | 1-1 |
| Նիս - Մէթց | 3-1 | Մարսէյլ - Լանս | 1-0 |
| Սթրասպուրկ - Պորտօ | 1-1 | Օքսէռ - Լօրիան | 5-3 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Լիոն | 11 | 8 | 1 | 2 | 24-10 | 25 |
| Նանսի | 10 | 7 | 2 | 1 | 19-7 | 23 |
| Ռընէ | 11 | 6 | 3 | 2 | 15-8 | 21 |
| Լը Մանս | 11 | 6 | 1 | 4 | 15-14 | 19 |
| Պորտօ | 11 | 5 | 4 | 2 | 14-10 | 19 |
| Վալանսիէ | 11 | 5 | 3 | 3 | 13-12 | 18 |
| Սթրասպուրկ | 11 | 4 | 4 | 3 | 11-8 | 18 |

# ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ՝ 70-ԱՄԵԱԿ

*Շարունակուած էջ 10-էն*

*ճառաւ: Հենրիկ Անասեան իր բնատուր ձիրքերը եւ հայագէտ-պատմաբան հօրմէն ժառանգած դրական գիծերը եւ կարողութիւնները ի սպաս դրած է հայ մշակոյթի եւ հայ ժողովուրդի ծառայութեան:*

*35 ամեակի առիթով մաղթանքներ եղած էին շարունակելու իր ստեղծագործական աշխատանքները, նոր ներշնչումներու, նոր յօրինումներու եւ ահա այսօր իր 50 ամեակի, անվարան կարելի է հաստատել որ մաէսթրոն երբեք ինքզինք հանգստեան չէ կոչած, եւ կը շարունակէ նոյն եռանդով, նոյն աշխուժութեամբ եւ նոյն նուիրումով: Առասպելական է Հենրիկ Անասեանի կազմակերպուածութիւնը, ժրաջանութիւնը, կորովը, ինքնավստահութիւնը, մէկ խօսքով, նկարագրային գիծեր որոնք անհրաժեշտ են իրեն նման ստեղծագործող մը համար:*

*Իր երաժշտական վաստակը վիթխարի է, եւ կ՚ընդգրկէ այդ արուեստին պահանջած բոլոր մարզերը - քանթաթ, երգ, խմբերգ, երգչախմբային եւ նուագախմբային կտորներ, եւայլն: Այս մարզին մէջ, մասնագէտ մը չըլլալով, ի վիճակի չեմ կարծիք յայտնելու: Գիտեմ սակայն մասնագէտներու եւ իր պաշտօնակիցներու կարծիքները թէ շատ հարուստ եւ տեսակաւոր է Անասեանի երաժշտական վաստակը: Սակայն խմբագրած ըլլալով իր գրական երեք հատորները «Այս ես եմ», գիտեմ որ Անասեան տեսնելու, վերլուծելու եւ արտայայտուելու անվիճելի շնորհք ունի, որ ընթերցողը կը կապէ իրեն, եւ կը ստիպէ խորասուզուիլ ընթերցումի մէջ:*

*Մաէսթրօ Հենրիկ Անասեանի հետ մեր ծանօթութիւն-բարեկամութիւնը աւելի քան մէկ քառորդ պատմութիւն ունի, երբ առաջին անգամ իրար հետ կը հանդիպէինք 1980-ական թուականներու սկզբնաւորութեան: Մենք իրար հանդիպեցանք մամուլի գծով եւ անկէ ետքն է որ ես առիթը ունեցայ բաւական մօտէն ճանչնալու զինք իբրեւ երգահան եւ խմբավար:*

*Ինծի համար հաճոյք է ողջունել Հենրիկ Անասեանը իր կեանքի այս հանգրուանին: Անցնող տասնամեակներուն, ես առիթը ունեցած եմ զինք ճանչնալու իր անհատական բազմաթիւ եւ բազմազան յատկանիշերով, որոնք զինք կը դարձնեն խիստ հետաքրքրական, առինքնող եւ ինչպէս կ՚ըսենք, «գոլորիտ» ունեցող անձնաւորութիւն: Իր անհատական, ստեղծագործական գործունէութեան առընթեր, Անասեան ստեղծած է երգչախումբ, «Սիփան» անունով որ ամբողջ տասնամեակներ մշակութային եւ գեղարուեստական ներդրում ունեցաւ Լոս Անճելոս, ամերիկեան այլ քաղաքներ, եւ Հայաստան:*

*Ես նաեւ զինք ճանչնալու առիթը ունեցած եմ իբրեւ մարդ, վայելելու իր մտերմութիւնը, թափանցելու իր ներաշխարհի ոլորտներէն ներս, հաստատելու համար իր անմիջականութիւնը, ընկերականութիւնը, կեղծիքի պակասը, ճշմարտախօսութիւնը: Ուրախ եմ որ անգամ մը եւս առիթը կ՚ունենամ մասնակցելու իր զոյգ յոբելիեաններու կազմակերպութեան, մաղթելով իրեն երկար, բարգաւաճ կեանք, մանաւանդ անվերապահ նուիրում իր արուեստին եւ սիրած ժողովուրդին մշակութային ժառանգութեան ճոխացման:*

## ԱՄԵՐԻԿԵԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ԴԱՌՆԱԼՈՒ ՅԱՐՑՈՒՄՆԵՐԸ ՊԻՏԻ ԴԺՈՒԱՐԱՆԱՆ

*ՎԱՐՈՒԺԱՆ ԳՐԱՃԵԱՆ*

*Տարիներով ուսումնասիրելէ ետք, Ճորճ Պուշի վարչակազմը քանի մը օրեր առաջ հրապարակեց հարցումներու նոր ցանկ մը քաղաքացի դառնալու համար: Այս նոր հարցումները բաւական դժուար են, որոնց շատերուն չեն կրնար պատասխանել նոյնիսկ զարգացած բնիկ ամերիկացիները: Երեւակայել որ քննիչները պիտի սորվին այս նոր հարցումներուն պատասխանները, որպէսզի քննութեան ենթարկեն քաղաքացիութեան թեկնածուները: Լաւ կէտը այն է սակայն, որ 10 հարցումներէն 6ին ճիշդ պատասխանողը պիտի յաջողի: Անշուշտ մի քիչ անգլերէն խօսիլ ու գրել ալ պէտք է: Այս նոր օրէնսդրութիւնը պիտի սկսի կիրարկուիլ Հոկտեմբեր 2008ին:*

*Գաղթականութեան ջատագովներ եւ գրասենեակներ քննադատեցին կառավարութեան այս նոր ցանկը, ոչ միայն անոր համար որ նոր հարցումները շատ դժուար եւ վերացական են, այլ նաեւ անոր համար որ Պուշի վարչակարգը կը քաղաքականացնէ սիթիզըն ըլլալու քննութիւնները:*

*Կը թելադրուի բոլոր անոնց որոնք առնուազն 5 տարիէ ի վեր օրինաւոր բնակիչ են Ամերիկայի, այսինքն կրին քարտ ունին, անյապաղ դիմել քաղաքացի ըլլալու, Հոկտեմբեր 2008էն առաջ, նոյնիսկ կարելի է դիմել 5 տարին ամբողջացնելէ 90 օրեր առաջ:*

*Պէտք է ամերիկացի սիթիզըն ըլլալ մանաւորաբար անոր համար որ հայկական ցեղասպանութեան ճանաչումը Ամերիկայի կողմէ, պէտք է ունի հայկական ձայներու:*


## ՎԱՐՁՈՒ ԽԱՆՈՒԹ

*Փասատինայի մէջ փոքր խանութ մը վարձու է Washington պողոտայի վրայ: Հասցէն է՝ 1527 Washington Blvd. Pasadena:*
*Մանրամասնութիւններու համար հեռաձայնել Աւոյին՝ (626) 794-5318 թիւին:*

## ՔԱՋ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:00
Կլէնտէյլի CHARTER CABLE 26-րդ կայանից

## «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»

ՅԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
ԿԼԷՆՏԷՅԼ - ՊԸՐՊԷՆՔ - ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ
ՅԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

## ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ

(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

**Հայ Թելեժամը Կը Վերադառնայ 18ը Ալիք Վրայ**
**Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 ժամ այլ Օրուան 24 ժամերը**

**Շաբաթը 7 օր անվճար**
**Հարկ չկայ բաժանորդագրուելու – 40 Յաւելեալ ալիքներ**

**Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Հայկական Թելեժամ (818) 982–2400**

*********

**The Armenian Teletime Is Back On Channel 18**
**Not 1 Hour, Not 2 Hours, Not 3 Hours But 24 Hours Per Day**
**7 Days Per Week, Free**
**No Subscription Fee - Plus 40 Additional Channels**

**For info call The Armenian Channel (818) 982-2400**

# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year) * $50,00 for USA**
*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**
*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**

**Name: ----------------------------------------**

**Address: --------------------------------------**

**City: --------- State:--------- Zip Code:------ Country: ------ -------**

**Tel :------------------------ Fax : ------------------------**

# ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ




1887-2007

# 120 ԱՄԵԱԿԻ

# ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

*Կազմակերպութեամբ՝*

**Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի**

*Օրուան Գլխաւոր Բանախօս՝*

**Լիւտմիլա Սարգսեան**

*Հայաստանի ՍԴՀԿ-ի Ատենապետ*

## Գեղարուեստական ճոխ Յայտագիր

*Գեղարուեստական Ղեկավար՝*

**Խմբավար՝ Միքայէլ Աւետիսեան**

*Կը Մասնակցին՝*

**Առիս Հարմանտեան Գագիկ Պատալեան**
**Սամուէլ Վարդանեան**
**Վարդան եւ Սիրանուշ Գէորգեան Պարային Համոյթը**

*Տեղի կ'ունենայ*

## Կիրակի, Նոյեմբեր 4, 2007

**երեկոյեան ժամը 6:00-ին**

**Glendale High School-ի սրահին մէջ**

**1440 East Broadway, Glendale, CA 91205**

**Մուտքը՝ Ազատ**